

6811

32731

U-23

1907

2010

1-
Սօցիալ-Դեմոկրատիական Բ. Հ. Կազմակերպութիւն:


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՕԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՆՅԷ

ՄԱՅԻՍԻ

ՄԷԿԸ

Բովանդակութիւն.

1. Մայիսը ողջունում է հայ բանւորներին . . . Նարօ
2. Մայիսի մէկը
3. Ութ ժամեայ բանւորական օր . . . Դ. Տէր-Դ.
4. Ռամկավար հանրապետութիւն . . . Ա. Մանիկեան
5. Կորչի միլիտարիզմը . . . Մ. Ռօբերտ
6. Մըրէկ (բանաստեղծութիւն) Տան
7. Կարլ Մարքս
8. Ֆրիդրիխ էնգէլս
9. Թւերը իրենք են խօսում!
10. Պրօլետարներ բոլոր երկրների՝ միացէ՛ք... Նէօֆիտ



1907 թ.

Սօցիալ-Դեմոկրատիական Բ. Հ. Կազմակերպություն

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՆԵՎՐՆԵՐԻ ՄԵՆԵՔ

ՄԵՅԻՍԻ

ՄԷԿԸ


Բովանդակություն.

1. Մայիսը ողջունում է հայ բանւորներին Նարո.
2. Մայիսի մէկը
3. Ութ ժամեայ բանւորական օր Դ. Տէր-Դ..
4. Ռամկավար հանրապետութիւն . . . Ա. Մ-նիկեան
5. Կորչի միլիտարիզմը Մ. Ռօբերտ
6. Մըրիկ (բանաստեղծութիւն) Տան
7. Կարլ Մարքս
8. Ֆրիդրիխ էնգելս
9. Թւերը իրենք են խօսում!
10. Պրօլետարներ բոլոր երկրների՝ միացէք.. Նէօֆիա

1907 թ.

126

47648-ահ



32802-64

2001

ՄԱՅԻՍԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է

ՀԱՅ ԲԱՆԻՈՒՆԵՐԻՆ!

Ուղիղ տաանկութ տարի սրանից առաջ Փարիզում գումարւեց միջազգային սօցիալիզմի ներկայացուցիչների համագումարը:

Ֆրանսիան տօնում էր այդ թւին (1889 թ.) Ֆրանսիական յեղափոխութեան հարիւրամեակը, տօնում էր՝ հպարտ իր անցեալով, որ կաշկանդող ստրկութիւնը փշրելով քաղաքացիական ազատութիւն էր կերտել. հպարտ էր, որովհետեւ նա դարձեալ անսայթաք մարտնչում էր յանուն շահագործող բանւորական մասսաների:

Այդ թւին էր, որ համաշխարհային բանւորութեան սօցիալիստ կազմակերպութիւնները ժողովւել էին Փարիզում հռչակաւոր «Ինտերնացիոնալ»-ի անկումից յետոյ, բոլոր երկրների սօցիալիստ բանւորութեան յառաջախաղացութեան գործը օղակելու:

Եւ իրան: 1889 թիւը սօցիալիզմի մարտնչող բանակի համար մի նոր դարագլխի շրջան է, որից յետոյ սօցիալիստական բանւորութեան կեանքում արտայայտւած բոլոր խոշոր քաղաքական և տնտեսական հարցերը ենթարկւում են մի-

Նազգային բանւորութեան բարձր ատեանի՝ մի-
Նազգային սօցիալիստական կօնգրէսներէ քննու-
թեան և մշակում են ընդհանուր պլաններ հա-
մայն բանւորութեան համար:

1889 թ. նշանակալից է և նրանով, որ
սահմանեց Մայիսի մէկի տօնը ողջ երկրներէ
բանւորութեան համար:

Դա հասարակ հանգստեան տօն չէր, որ
սահմանում էր միջնազգային սօցիալիստական հա-
մագումարը, դա կոչի եւ պայքարի, բանւորու-
թեան հաշակչութի օրն էր, նրա քաղաքական և
տնտեսական ձեւերով և գլխաւոր պահանջներէ
մարտակոչի օրը:

Սօցիալիստ բանւորութիւնը այդ օրը ոտքի
պիտի կանգնէր ամեն տեղ հնչեցնելու սօցիա-
լիզմի աւետիսը, ցոյց տալու բոլոր շահագործող-
ներին և կեղեքողներին իր ազատարար կռի-
ւի մասին, սասանեցնելու բոլոր այն խաբիսու շէն-
քերի հիմքերը, որոնց վրայ յենած են ներկայ
Ֆէօդալական բուրժուական կառավարութիւնները:

Փարիզի կօնգրէսից անցել է 18 տարի, և
այդ ժամանակամիջոցում երկրագունդը տօնում
է Մայիսի մէկը, բացառութեամբ Պարսկաստանի
և Տաճկաստանի:

Մայիսի մէկը դարձել է բանւորութեան
մարտական նշանաբանների օրը, նրա կռիւ դաշ-
տը նետելու ազդանշանը:

Բանւորութեան և ժողովրդական մասսանե-
րի արիւնով և անդուլ կռուով ազատագրւած եր-
կրներում սօցիալիստ բանւորութիւնը այդ օրը
դադարում է աշխատելուց և ոտքի է կանգնում
կատարելու իր մարտական շտաբի հրահանգները:

Մայիսի մէկը քաղաքական ազատ երկրնե-
րում բանւորութիւնը տօնում է կարմիր դրօշակ-
ները ծածանելով, որոնց վրայ մակագրւած է
օրւայ պահանջները, աւետում է աշխատանքի
տակ հեծող մասսաներին սօցիալիզմի յաղթական
արշաւանքը, տանջող մարդկութեան նորեկ ար-
շալոյսը:

Քիչ չէ պատահել, որ Մայիսեան տօնը ա-
զատ երկրներում անգամ չհոսեցնէր բանւորու-
թեան արիւնը. սակաւ չէ եղել, որ բուրժուա-
կան աշխարհը, իբրեւ թշնամի մի բանակ, բան-
ւորութեան նշանաբաններին՝

Փա՛նֆ աշխատանքին,

Կոռ՛ջի՛ն քործուական կարգերը.

Զհակադէր իր մարդկութեանը ստրկացնող
կառանշը՝

Կեցցե՛ Կապիտալը,

Կոռ՛ջի՛ Սօցիալիզմը:

Բայց այդ արիւնը ոչ մի երկրում այնքան յորդ և առատ չէ հոսել, որքան բռնակալութեան ճիրաններում տապակող մեր տարաբաղդ հայրենիք Ռուսիայում: Չենք ուզում, ընկերներ, թարմացնել ձեր յիշողութիւնները, մորմոքել ձեր կսկծոտ սրտերը, այն անթիւ սիրելի ընկերների, նահատակների և անմեղ զոհերի արեամբ, որով ողողած է մեր դժբաղդ երկիրը: Նրանք ազատութեան սեղանին զոհ բերին այն բոլորը, ինչ որ կարող էր փրկել մեզ բոլորիս, իսկ մենք բոլորս համարձակ առաջ ենք ընթանում նրանց թողած աւանդը իրագործելու:

Չը նայած բռնակալութեան բոլոր դաւերին և ցինիկութիւն, Ռուսիայի բանւորութիւնը երբէք յետ չէ մնացել Մայիսի տօնից, նա կրկնակի եռանդ է թափել իրագործելու Մայիսեան պահանջները, որովհետեւ քաղաքակիրթ երկրների մէջ Ռուսիայի բանւորութիւնը միակն է, որ հեծում է միահեծան միապետութեան ձեռքին:

Ռուսիայի բանւորութեան բաղդակից և նրբանից անբաժան Կովկասի սօցիալիստ բանւորութիւնը ահա վեց տարի է տօնում է շարունակ Մայիսի մէկը: Գործարանական խոշոր կենտրոններում՝ Բագու, Թիֆլիզ, Բաթում, այդ օրը բանւորութիւնը գործաթող է լինում, նա հնչեցնում է իր համերաշխութեան ձայնը և միանում համաշխարհային բանւորութեան սօցիալիս-

տական կազմակերպած բանակին:

Հայ բանւորը նոյնպէս անմասն չէ եղել Մայիսի մէկը տօնելու մէջ:

Նա վերջին երեք տարին աւելի ուժգին թափով այդ օրը գործադուլների միջոցով յայտարարել է իր շահագործողներին և կեղեքողներին, որ ինքն էլ է ուզում ապրել, նա իր թիկունքն է դէմ տւել այդ օրը միապետական կառավարութեան և իր բազուկները միացրել միջազգային սօցիալիստ բանւորութեան մարտնչող բանակին:

Տասնևութ տարի է ահա, որ աշխատանքը դարբնող միջազգային սօցիալիստ բանւորութիւնը տօնում է Մայիսի մէկը. տասնևութ տարի է, որ նա հնչեցնում է իր կամքը, մարտի հրաւեր ուղղում յանուն սօցիալիզմի բոլոր ճնշածների և շահագործողներին:

Եւ դա իզուր, ապարդիւն չէ անցել:

Այսօր նա իր շարքերում տեսնում է բոլոր ազգերի ճնշած բանւորներին. այդ շարքերի մէջ է և հայ սօցիալիստ բանւորութիւնը:

Յեղափոխութեան ալիքների մէջ ապրող Ռուսիայի բանւորութիւնը այս տարի Մայիսի մէկը կ'տօնէ աւելի ուժգին թափով, նա շահագործւածների և ճնշւածների բանակին կ'յայտարարէ, որ յեղափոխութիւնն է միակ նրանց փրկութեան քանապարհը, նա այսօրւայ ժողովրդի և միա-

պետութեան մէջ տարւող ահարկու կռիւն կա-
ռաջադրէ իր միակ պահանջը՝

Դէպի յեղափոխութիւն!

Եւ սօցիալիստ հայ բանւորութիւնը, միջադ-
գային սօցիալիստական բանակի այդ մի մասնի-
կը, իր բաղդակից ընկերների հետ կռիւ դաշար
կելնէ պաշտպանելու Մայիսեան պահանջները,
խորտակելու ափս խարխուլ շէնքը, որ կոչւում է
Ռուսական Միապետութիւն:

Մայիսը ողջունում է հայ բանւորներին,
նա հայ բանւորի խոնաւ նկուղից մինչև աղքատ
գեղջուկի խրճիթը ուղարկում է միջազգային
սօցիալիստ բանւորների ողջոյնը և արծարծում
է Մայիսեան պահանջները:

Փոքր հայ սօցիալիստ բանւորներին, որով-
հետև նրանք այժմ գիտեն կռել, ապա ուրեմն
և ապրել:

Ն Ա Ր Օ

ՄԱՅԻՍԻ 1-Ը

(Պրօլետարիատի միջազգ. և համաշխարհային տօնը)

Մի յետագարձ հայեացք:

Պրօլետարիատը ամենուրեք իր նուաճում-
ները սրբագործել է կռով և արիւնով: Մայիսի
1-ը, որ այսօր համաշխարհային պրօլետարիա-
տին ոտքի է կանգնեցնում ընդդէմ բուրժուա-
կան հասարակութեան, իր պատմութիւնն ունի
և այդ պատմութիւնը հէնց իր սկզբից արիւնով
է դրօշմաւծ:

Ամերիկայի Զիկագօ քաղաքի բանւորները
1886 թ. որոշում են Մայիսի մէկից գործադու-
ով ձեռք բերել ութ ժամեայ բանւորական օրւայ
իրաւունքը: Նշանակւում է հրապարակական ժո-
ղով: Առիթից օգտւում են անիշխանականները,
որոնք նախ ցրում են մի կոչ՝ հրաւիրելով բան-
ւորներին զինել, ապա հրապարակական ժողո-
վում հանդէս են գալիս խիստ ճառերով և առա-
ջարկներով: Միջամտում է ոստիկանութիւնը:
Անիշխանականները հանդիպում են ոստիկաննե-
րին ումբով և ապա երկուստեք սկսւում է կռիւ
ատրճանակներից: Սպանւում են 7-ը և վիրաւոր-
ւում 60 ոստիկաններ: Լինում են կորուստներ
նաև բանւորների կողմից: Մայիսի 1-ը բանւո-

բութեան համար դառնում է պատմական օր:

1888 թ. դեկտեմբերին, Ամերիկայի բան-
ւորների Մէն—Լուիի համագումարը որոշում է
տօնել 1890 թ. Մայիսի 1-ը: Ամերիկայի բան-
ւորութեան այդ որոշումը հաստատւում է Փարիզի
1889 թ. միջազգային սօցիալիստական կոնգրէսի
կողմից և առաջադրւում բոլոր բանւորներին ցոյ-
ցի և հանգստութեան օր դարձնել Մայիսի 1-ը:

Անցել է 18 տարի: Նորից Մայիս է գալիս!

Ի՞նչ է ասում նա մեզ: Մի՞թէ այն, որ այդ
օրը, Մայիսի 1-ը, մենք համարենք զւարճու-
թեան մի օր, որ գեղածիծաղ վարնան հանդէպ
մենք մի կողմը նետենք մեր սիրամաշուկ ցաւերը և
տարին գէթ մի օր մոռանանք մեր բանւորական
վիշտն ու վարդը: Ո՛չ: Մայիսը թեթև ժամավա-
ճառութեան օր չէ: Մայիսը ցոյցի օր է, երբ բան
ւորութեան շարքերը հանդէս են գալիս նորից
կրկնելու բուրժուական աշխարհին, որ գործա-
ւանների խեղդուկ միջնորդում, հանքերի խո-
նաւ պուճախներում և ոլորապտոյտ այրերում,
որ նա ամենուրեք տենդով բարձրանում է աշ-
խատանքի խրոխտ բանակը, որ նա ուղղում է
իր կորացած մէջքը, վրէժխնդրութիւն ու կորով
է ամբարում իր կրծքի տակ, գիտակցութիւն է
պատւաստում իր շարքերին, կանոնաւորում է
իր գնդերը վերջնական հարւածը տալու բուր-
ժուական հասարակութեան:

Ազատութիւն! Հաւասարութիւն! Եղբայրու-
թիւն!

Բուրժուազիան անկարող էր իրագործել այդ
նշանաբանները, նա խարդախեց նրանց էութիւնը,
բայց բուրժուազիայի գերեզմանափոր պրօլետա-
րիատը կիրականացնէ իսկական ազատութիւնը,
իսկական հաւասարութիւնը և իսկական եղբայրու-
թիւնը: Պատմութիւնից այդ վիճակած է պրօլե-
տարիատին: Մայիսի 1-ին նա գալիս է յիշեց-
նելու իրեն զեղխ, շւայտ, ցոփ կեանքի յանձ-
նած ու զառամեալ բուրժուազիային, որ հեռու
չէ «նոր աշխարհի», սօցիալիստական հասարա-
կութեան, արշալոյսը, որ նա, պրօլետարիատը,
իր աշխատանքի վրայ, իր խորքերում անդուլ
կերպով կռւում է ռազմի և պաշարի զէնքերը,
որ այսօր էլ նա իր ոյժերին մի հանդիսաւոր
ցոյց է նշանակել՝ էլ աւել ամբապնդելու պրօլե-
տարական համերաշխութիւնը և խտացնելու նրա
գիտակից շարքերը:

Այո, վեհ ու նշանակալից է Մայիսի 1-ը!

Զինավարժութեան, նոր թափի և նոր կո-
րովի օր է նա: Ո՛չ թէ հանգստանալ քաղքենու
հասկացողութեամբ — այլ կռել, մտաւոր ու նիւ-
թական զէնքեր:

Եւ Մայիսի 1-ին համաշխարհային պրօլե-
տարիատը իր տօնական ցոյցերով յիշեցնում է
թէ իր գեռ ևս թմրած շարքերին և թէ իր թըշ-

նամիններին նախ՝ իր վերջնական նպատակներին, սօցիալիզմի, մասին, երկրորդը առաջադրում է, որպէս պահանջ, իր մինիմում-ծրագրից *) երեք հիմնական կէտեր, որոնց իրագործման հետ նա կապում է իր կազմակերպութեան թափն ու կշիռը:

Համաշխարհային պրօլետարիատը Մայիսի 1-ին պահանջում է՝

1. Ղևթ ժամեայ բանւորական օր!
2. Ռամկավարական հանրապետութիւն!
3. Մշտական զօրքի վերացումն, նրա փոխարինումը ժողովրդական միլիցիայով!

*) Այստեղ հարկ ենք համարում նկատել, որ սօցիալ-դեմօկրատիայի ծրագիրը բաժանւում է երկու մասի՝ մինիմում-ծրագրի և մաքսիմում-ծրագրի:

Մինիմում, այսինքն ամենանւազ ծրագիրը, դա այն պահանջներն են (օր. ռամկավար հանրապետութիւն, ընդհանուր ընտրողական իրաւունք, մամուլի, խօսքի, ժողովների, խղճի, ընկերութիւնների և գործադուլների ազատութիւն, ժողովրդական միլիցիա, ընդհանուր կրթութիւն, 8 ժամեայ բանւորական օր և այլն), որոնց իրագործումով դեռ չէ իրականանում սօց.~դեմ. մաքսիմում-ծրագիրը (վերջնական նպատակ), այն է դասակարգերի և դասակարգային պետութեան տապալումը, արդիւնագործութեան միջոցների էքսպրօպրացիան և սօցիալիստական կարգերի, կատարեալ հաւասարութեան, հաստատումը:

ՈՒԹ ԺԱՄԵԱՅ

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐ

Բանւորի հարստութիւնը նրա բանւորական ոյժն է: Ոչ թէ ազգասիրութեան և մարդասիրութեան համար է ընդունւում նա աշխատանքի այս կամ այն կապիտալիստի գործարանը, այլ միմիայն ու միմիայն այդ բանւորական ոյժի համար, որը շուկայում ծախւում է, որպէս ապրանք, աւել կամ պակաս գնով: Սակայն եթէ բանւորական ոյժը ապրանք է, ապա այնպիսի ապրանք, որ իր նմանը չունի բոլոր ապրանքների մէջ. չէ՞ նրա գործադրութիւնից են ստեղծւում մշտնացած ապրանքները: Մի մեքենայ, երբ գործադրութեան մէջ է՝ քիչ-քիչ իր էութիւնը, իր արժէքը մշտցնում է շինած ապրանքների մէջ: Այո, միայն իր արժէքը: Ո՛չ աւել, ո՛չ պակաս: Օրինակի համար. մի մեքենայ արժէ 100 ռ. և այդ մեքենայով հնարաւոր է մշակել 100 կտոր ապրանք, կը նշանակէ այդ մեքենան ամեն-մի ապրանքի մէջ է մտցնում իր արժէքի մէկ հարիւրերորդ մասը և վերջին մասնիկի հետ էլ նա վերջ է տալիս իր գոյութեանը: Մեքենան այդպիսով տալիս է ապրանքին միայն իր արժէքը և այդ չափով էլ աւելացնում է նրա գինը, բայց նա նոր արժէքներ չէ ստեղծում: Նոր արժէքներ ստեղծում է բանւորական ոյժը, որը կապիտալիստը կարողանում է, օգտուելով բանւորի անմխիթար կացութիւնից, գնել շուկայում շատ էժան և մէկը տւածի փոխարէն՝ երկու կամ երեք անգամ աւել դուրս հանել խեղճ ու կրակ բանւորից:

Եւ կապիտալիստների դիզած ամբողջ հարստութիւնը, ինչպէս մեզ մօտ են ասում, կտրած աշխատանք է, չը վարձատրած քրտինք և արիւն: Հասկանալի է ապա ուրեմն թէ ինչու կապիտալիստները ամենուրեք աշխատում են երկարացնել բանւորի աշխատանքի ժամերը՝ առարկելով թէ՛ «եղբայր, մենք ձեզ վարձել ենք ամբողջ օրով, իսկ ամբողջ օրը մենք հասկանում ենք, և դուք էլ այդպէս պիտի հասկանաք, որ սկսւում է վաղ հաւախօսից և շարունակւում է մինչև մութը, երբ այլևս անկարելի է առանց լոյսի աշխատել»: Շատ ժամանակ էլ, այդ պարոնները աւելացնում են թէ՛ առհասարակ «շնորհքով, հնազանդ և համեստ» բանւորը վերջինը պիտի թողնէ աշխատանքը, որ կարիք չը կայ տուն վազելու և ծուլանալու, որ աշխատանքը հէնց դրած է «ի վերուստ» և ասած է թէ «երեսիդ քրտինքովդ կճարես հացդ», որ առհասարակ աշխատանքը «սուբբ է» և մարդ չպիտի փախչէ նրանից և այլն: Պարզ է, որ այդ բոլոր զրոյցներն ու խրատները անում են միայն նրա համար, որպէսզի հնարաւոր լինի աւել աշխատեցնելու բանւորներին, մի բան էլ քաշելու նրա հիւթերից, Չէ՞, առացի, հէնց այդ չվարձատրւած հիւթերից է գոյանում կապիտալիստի հարստութիւնը: Եւ երբ այդպիսի խրատներ է բլբլում կապիտալիստը՝ ի՞նչ պիտի պատասխանէ բանւորը: Նա նախ և առաջ մէջ տեղ պիտի բերէ մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսի խօսքերը: Ահա ինչ է ասում այդ հանճարեղ գիտնականը և բանւոր դասակարգի ամենասրտակից խորհրդատուն և բարեկամը:

«Այն ապրանքը, պիտի ասէ բանւորը կապիտալիստին, որը վաճառել եմ ես քեզ, տարբերւում է այլ բոլոր ապրանքային շեղձակոյտից նրանով, որ նրա գործադրութիւնը ստեղծում է արժէք, և աւելի մեծ արժէք,

քան թէ արժէ ինքը: Այդ իսկ պատճառով էլ դու գնել ես նրան: Ինչ որ քեզ համար կապիտալի արդիւնաւէտ գործառութիւն է, դա ինձ համար երևան է գալիս, որպէս բանւորական ոյժի մի աւելորդ վատնում: Մենք երկուսս շուկայում ճանաչում ենք միայն մի օրէնք—ապրանքների փոխանակութեան օրէնքը: Ապրանքի գործադրութիւնը պատկանում է ոչ թէ վաճառողին, որը նրան օտարացնում է, այլ գնողին, որը նրան ձեռք է բերում: Քեզ էլ ուրեմն պատկանում է իմ ամբողջ օրւայ բանւորական ոյժի գործադրութիւնը: Բայց այն գնի միջոցով, որով ես ամեն օր ծախում եմ նրան, պիտի վերարտադրեմ այն (բանւորական ոյժը) իւրաքանչիւր օր և այդպիսով հնարաւորութիւն ունենամ նորից ու նորից վաճառելու նրան: Ձխօսելով դեռ ձերութեան պատճառով իմ օրգանիզմի (մարմին) բնական մաշումի մասին և այլն՝ ես պիտի ընդունակ լինեմ աշխատելու վաղը ոյժի առողջութեան և առողջութեան նոյն նօրմալ աստիճանով, ինչպէս և այսօր: Դու քարոզում ես ինձ միշտ «խնայողութեան» և «ժուժկալութեան» աւետարանը: Շատ բարի! Ինչպէս խելացի, խրնայող տէր՝ ես ցանկանում եմ պահպանել իմ միակ ստացւածքը, բանւորական ոյժս, և վերապահել նրան ամեն-մի անմիտ շռայլումից: Ես ցանկանում եմ ամեն օր դնել շարժման մէջ, կինդանի աշխատանք դարձնել նրա այնպիսի մի մասնիկը, որը համապատասխան լինի նրա աշխատանքի նօրմալ տեղութեանը և նրա ամբողջ զարգացմանը: Բանւորական օրւայ չափազանց երկարացումով դու կարող ես մի օրում շարժման մէջ դնել իմ բանւորական ոյժի մի այնպիսի քանակ, որը ես անկարող կըլինեմ վերարտադրել 3 օրւայ ընթացքում: Ինչ որ դու շահում ես աշխատանքում, այն ես կորցնում եմ աշխատանքի էութեան մէջ: Իմ բանւորա-

կան ոյժի գործադրութիւնը և թալանը—դա երկու կատարելապէս տարբեր բաներ են» *):

Այսպէս է խօսում Կարլ Մարքսը: Ո՞ր բաները կը բացասէ այդ խօսքերի ճշմարտութիւնը: Ոչ ոք: Բայց եթէ Մարքսի պատճառաբանութիւնները ըզխում են դուռ բանւորական շահերից, դա նշանակում է, որ այդ դատողութիւնները զիւրեկան չեն կարող լինել բանւորութեան ոխերիմ հակառակորդ դասակարգին, բուրժուազիային: Եւ իրան: Բուրժուազիան և նրա շահերի արտայայտիչ գիտնականները թէ Մարքսից առաջ, թէ Մարքսի ժամանակ և թէ յետոյ միշտ կրկնել ու կըրկնում են, որ բանւորն ու գործատէրը երկու ազատ ապրանքատէրեր են և նրանք ազատ պիտի լինեն տնօրինելու, կարգաւորելու իրենց յարաբերութիւնները, որ ոչ ոք, մանաւանդ պետութիւնը, իրաւունք չունի խառնելու բանւորի և գործատիրոջ պայմանագրին: Դա շատ հասկանալի է: Որովհետեւ բանւորը ներկայ դէպքում թոյլ կողմն է, ուրեմն էլ ինչո՞ւ իրաւունք տալ պետութեանը խառնելու բուրժուազիայի գործերին և չափաւորելու նրա ախորժակը: Եւ երբ 1847 թ. անգլիական պարլամենտը հրատարակեց 10 ժամեայ բանւորական օրւայ օրէնքը, Մարքսը և բանւոր դասակարգի բարեկամները չափազանց ուրախութեամբ ընդունեցին պարլամենտի այդ քայլը: Դա սկզբունքի յաղթութիւն էր, որը նշանակում էր թէ պետութիւնը սառն հանդիսատես չպիտի լինի աշխատանքի և կապիտալի կուլին, այլ ուշադրութիւն պիտի դարձնէ աշխատանքի և աշխատանքի պայմանների վրայ և պիտի չափաւորէ բուրժուազիայի գալի ախորժակը, որը միայն երկրպագում է շահի աստծուն և պատրաստ է ոտնահա-

*) К. Марксъ «Капиталъ», т. I, стр. 148.

բելու ամեն մի սրբութիւն **): Այժմ համարեա թէ համատարած կարծիք է, որ աշխատանքի ազատութիւն ասածը նշանակում է ստրկացնել բանւորներին բուրժուազիային և որ պետութիւնը պիտի ունենայ գործաւանային օրէնքներ: Որո՞նք են գործաւանային օրէնքները:

Պայմանաժամերից դուրս աշխատանքի արգելումն, բացառիկ օրէնքներ երեխաների և կանանց համար, պետական ապահովագրութիւն ծերութիւնից, հիւանդութիւնից և հաշմանդամութիւնից և այլն (տես Սօց.-Դէմ. Բան. Հայ Կազմ. ծրագրի 10, 11, 12 և 13 երեսները), իսկ որ գլխաւորն է նօրմալ բանւորական օրւայ օրէնքը: Իհարկէ, մեր թւած կէտերի տակ բուրժուազիան և պետութիւնը այլ պարունակութիւն են դնում, մենք այլ: Օրինակ եթէ բուրժուազիայի համար ցանկալի է 11-ժամեայ բանւորական օրւայ մի օրէնք, մենք, բանւորներս, ա՛նդում ենք, որ մեր ցանկացածը—8 ժամեայ օրն է: Եւ հէնց այդ 8 ժամեայ բանւորական օրւայ պահանջն էլ միշտ ի թիւս այլ պահանջների կրկնում ենք Մայիսին:

Բացատրենք թէ ինչու մեզ այդքան անհրաժեշտ է 8-ժամեայ բանւորական օրը:

8 ժամեայ բանւորական օրը ստողջապահական պահանջէ: Մենք մեր յօդածի սկզբում ասացինք, որ մեր հարստութիւնը մեր բանւորական ոյժն է, իսկ մենք պիտի իմանանք, որ առողջ ոգին, նաև ոյժը, լի-

**) Բանւորները չպիտի մոռանան, որ ամեն մի պետութիւն պատրաստ չէ պաշտպանելու նրանց: Նախ՝ պաշտպանութիւնը ըզխում է նրանից, որ իրենք բանւորները կազմում են որոշ ոյժ և ճնշում են գործադրում, իսկ երկրորդը՝ բանւորական շահերը շատ ու քիչ պաշտպանում են իրաւական պետութիւնների մէջ, այսինքն այնպիսի պետութիւնների, որոնց կառավարութիւնները ընտրւում են ամբողջ ժողովրդի կողմից և ենթարկւում են ընտրող ժողովրդի կամքին:

նում են առողջ մարմնի մէջ: Ութ ժամից աւել աշխատելով՝ մենք յոգնում, վաստակում ենք, մենք թուլանում ենք ֆիզիքապէս, իսկ նոյնիսկ երեխաներին էլ յայտնի է, որ ամեն-մի հիւանդութիւն նախ և առաջ բռնում է թոյլ մարդկանցից: Բանւորները աշխատում են չափազանց վատառողջ պայմաններում՝ գործարանները լինում են մութ, խոնաւ, ցուրտ, կեղտոտ և ապականւած օդով: Այդպիսի տեղերից միշտ էլ անպակաս են տարափոխիկ հիւանդութիւնները, մանաւանդ որ այդտեղ միմիանց հետ շփուում է մարդկանց մի բազմութիւն: Միթէ՞ հասկանալի չէ, որ թոյլ բանւորը այդտեղ ամեն բոլորէ ենթակայ է հազար ու մի տեսակ պատահարների: Հիւանդացաւ կամ ֆլասեց բանւորը՝ գործատէրը իսկոյն նրան դուրս է շարժելու փողոց: Զէ՞ որ բանւորը գործատիրոջ այնքան է ձեռնտու, որքան նա առողջ է, թարմ, ուժեղ ու ժիր: Եթէ սա այսպէս է, ապա էլ ինչո՞ւ բանւորը օր առաջ վատն է իր ոյժերը: Կամ նա պիտի խելագար լինի կամ տգէտ: Գիտակից բանւորը չպիտի խորշէ, փախչէ աշխատանքից, բայց և չպիտի դառնայ, ինչպէս ասում են, իշի նահատակ: Ո՛չ: Աշխատել բարեխղճաբար, բայց աշխատել ոչ աւել 8-ժամից: Մեր առողջութիւնը մեզ համար թանգ պիտի լինի, որովհետեւ նա է մեր միակ գանձը: Վատնեց, շուլեց այդ գանձը և մենք սոված ու մերկ շարժւած ենք փողոց: Յետոյ, գործարաններում բանում են բարդ և ուժեղ մեքենաներ: Թոյլ բանւորը (իսկ թոյլերը համարեա թէ միշտ իրենց կորցրած են լինում) կարող է անզգուշութիւնից ընկել այդ մեքենաների տակ, ֆլասեւել կամ ճգմել: Ո՞ւմ է դա ցանկալի: 8-ժամիայ բանւորական օրը անհրաժեշտ է մեր միտաւորականի եւ բարոյականի տեսակէտից: Եթէ մենք աշխատում ենք ութ ժամից աւել, դա նշանակում է,

որ մենք աշխատանքից յետ ենք դառնում յոգնած, վատակած: Շատ պարզ է, որ յոգնած մարդը ախորժակ ու ցանկութիւն չունի ոչնչով պարապելու և նա մեկնում է հանգստանալու, որպէսզի միւս օրը գոնէ մի քիչ թարմ ոյժերով մտնէ գործարան: Բայց միթէ մենք գրաստներ ենք, որ աշխատանքից յետոյ մտնենք ախոռ և էլ ուրիշ մի մտահոգութիւն չունենանք: Ո՛չ, մենք մարդիկ ենք, իսկ ինչ կայ աւելի վեհ, քան մարդը: Մենք պահանջ ունենք կարգալու, գրելու, պարապելու մեր երեխաների կրթութեամբ, գրուցելու ժեր ընտանիքի հետ, յաճախելու հասարակական զրադարաններ, ընթերցարաններ, ժողովներ, թատրօն, առհասարակ ապրելու, որպէս գիտակից քաղաքացի, իսկ թմրած, աշխատանքից խոնջացած մարդը, պարզ է, որ անկարող է անելու այդ: Բուրժուազիային էլ հէնց այդ է հարկաւոր, որ մենք ժամանակ չունենանք պարապելու հասարակական գործերով, մեր միտքը բթնայ, մենք դառնանք անզգայ լաւին ու վատին և վիզներս ծուռ, միշտ խոնարհ՝ կանգնած լինենք նրա առջև և ենթակայ նրա քմահաճոյքներին: Բայց միթէ՞ մենք խաղալիք ենք մեր թշնամիների ձեռքին: Ո՛չ: Մեզ հարկաւոր է մարդավայել կեանք: Մենք անբան գրաստներ չենք: Մեր ընտանիքը, մեր երեխաները, մեր սեփական շահերն ու գոյութիւնը հրամայաբար պահանջում են, որ մենք ազատ ժամանակ ունենանք մեր մտաւոր ընդունակութիւնները զարգացնելու համար, որպէսզի կարողանանք զանազանել չարը բարիից, որպէսզի զբաղենք մեր բանւորական կուսակցութեան գործերով և ոյժ կռնք կործանելու աշխարհիս անիրաւ կարգերը: 8-ժամիայ բանւորական օրով մենք նկարագրութիւն ենք տալիս աշխատանք գտնելու գործազուրկներին: Բանւորութիւնը պիտի պինդ յիշէ, որ կան ահագին

չափով անգործ, քաղցած ընկերներ, որոնք գուցէ հէնց պարապ են այն պատճառով, որ ամենայն ջանասիրութեամբ պաշտպանել են բանւորական գործը և դուրս վճարել կապիտալիստների ձեռքով: Քանի բուրժուազիան արդիւնաբերութեան միջոցների տէրն է և քանի որ արդիւնաբերում է ոչ թէ ժողովրդի կարիքներին բաւարարութիւն տալու համար, այլ միայն շուկայի պահանջով, ապա գործազրկութիւնը մի անխուսափելի չարիք է: Բանւորները պիտի թեթեւցնեն իրենց անգործ ընկերների դրութիւնը: Եթէ մենք 10 ժամայ փոխարէն աշխատում ենք 8 ժամ, դա նշանակում է որ մնում է 2 ժամայ դեռ չը կատարած աշխատանք*), որի համար և կը վարձւի անգործ բանւորը, իսկ մենք միշտ պիտի ձգտենք, որ գործազուրկներ, պարապ բանւորներ չը լինեն, որոնք քաղցից պատրաստ են միշտ գալու և ցածր գնով բանելու մեր տեղերը: Մեր սրբազան պարտականութիւնը պիտի լինի թէ օգնել նրանց և թէ չաշխատել կիրակիները, պայմանաժամերից դուրս, գիշերները և այլն, որպէսզի գործազուրկներն էլ հնարաւորութիւն ունենան աշխատանք գտնելու և մեզ հետ ձեռք-ձեռքի տւած կուելու բուրժուազիայի շահագործութեան դէմ: Օգնելով գործազուրկներին՝ մենք, կասկածից դուրս է, որ օգնում ենք հէնց մեզ:

8 ժամայ բանւորական օրը քաղաքական պահանջ է: Մեր վերը ասածներից պարզ երևում է, որ թէ մենք բանւորներս, և թէ մեր թշնամիները խիստ շահագրգռւած ենք 8 ժամեայ բանւորական օրով:

*) Ընթերցողը թող չմոռանայ, որ «չկատարած աշխատանքը» պիտի ընդունել որոշ վերապահումով, որովհետեւ երբ բանւորի աշխատանքի օրը կարճ է, նա աշխատում է առոյգ ոյժերով, ապա և անբաւարար է շատ ապրանքներ:

Ութ ժամեայ բանւորական օրը մեզ համար ուժեղ մկանունք է, կարմիր թշեր, կայտառութիւն, մտաւոր զարգացում, ընտանեկան երջանկութիւն, մարդավայել կեանք, ընկերական պարտք և օգնութիւն գործազուրկներին: 8-ժամեայ օրը բուրժուազիայի համար նշանակում է իջեցնել նրա շահագործման աստիճանը (ապա որոշ չափով և օգուտները), պատրաստել մի առողջ գիտակցութեամբ և կազմակերպութեամբ բանւոր դասակարգ, որը պատրաստ կը լինի նրա քրացիին աքցիով պատասխանելու, չափաւորելու նրա գայլի ախորժակը և այլն և այլն: Հասկանալի չէ՞ միթէ, որ բուրժուազիան և ժամանակակից պետութիւնը, որ սոսկ բուրժուազիայի գործերի կառավարութիւնն է, հեշտութեամբ մեզ չեն տալ այդ պահանջը: Մենք էլ լաւ պիտի իմանանք, որ ոյժը կարելի է տապալել միմիայն ոյժով, ապա և պիտի ձգտենք բուրժուազիայի քաղաքական բոլոր տեղ դնել պրօլետարիատի քաղաքական ոյժը: Մեր կուսակցութեան, սօցիալ-դեմոկրատիայի, դրօշակի տակ մենք պիտի կազմակերպւենք ոչ միայն տնտեսական կուռի համար, այլ և քաղաքական: Քաղաքականութիւնը մեզ համար, ինչպէս մի ժամանակ անգլիական բանւորներն էին ասում, դանակի և պատառաքողի հարց է, հարց լաւ բնակարանի, լաւ ճաշի և խմելիքի, լաւ աշխատավարձի և բանւորական կարճ օրւայ: Քաղաքականութիւնը մեզ համար միջոց է հասնելու տնտեսական բարեկեցութեան և ոչ թէ նպատակ: Այս տեսակէտից էլ 8-ժամեայ բանւորական օրը նաև քաղաքական պահանջ է:

Մեր բացատրութիւնից երևաց, որ 8-ժամեայ բանւորական օրը մեզ անհրաժեշտ է ջրի և օդի պէս: Ահա և ինչու Մայիսի 1-ին պրօլետարիատը պահանջում է և պիտի պահանջէ՝

8-ժամեայ բանւորական օր!

Դ. ՏԷԻ-Դ.

ՌԱՄԿԱՎԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Գիտակից պրօլետարիատը արդէն շատ վաղուց է հասկացել, որ մարդկային հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող դասակարգային կռիւը, հարստահարութիւնը և անհաւասարութիւնը կվերանան միմիայն այն ժամանակ, երբ մասնաւոր սեփականութիւնը տեղի կտայ սօցիալիստական կարգերին. և դրա համար էլ պրօլետարիատը կազմակերպուած ու ամենակատաղի կռիւն է մղում ներկայ կապիտալիստական կարգերի դէմ:

Սակայն սօցիալիզմի դադափարը իրագործելու համար պրօլետարիատը պէտք է աշխատի կազմել իրանից մի այնպիսի ոյժ, որի գրոհի առաջ այլ ևս խաւար տարրերը չկարողանան դիմանալ. իսկ այդ ոյժը կազմելու և նրան որոշ ուղղութիւն տալու համար պրօլետարիատը մինչև սօցիալիզմի իրականացումը իր կռիւի յաջողութեան համար պիտի ստեղծէ նպաստաւոր պայմաններ: Այդ պայմաններով է, որ պրօլետարիատը այնուհետև յաղթական քայլերով կգիմէ դէպի իր վերջնական նպատակակէտ՝ դէպի սօցիալիզմ: Այդ պայմանները այն մօտաւոր պահանջներն են, որ ամեն բոլոր կեանքի մէջ աշխատում է իրականացնել պրօլետարիատը ու նրա դասակարգային ներկայացուցիչը, սօցիալ-դեմօկրատիան:

Այդ տեսակէտից պրօլետարիատը ձգտում է մի

այն տեսակ պետական կազմի, որը պիտի դերացնէ նրա ապագայի մեծ յաղթութիւնը: Նա վերին աստիճանի շահագրգռած է այն բանում, որ պետական այս կամ այն կազմը որքան կարելի է յաջող կերպով նպաստէ նրա սօցիալիստական աշխատանքին:

Ժամանակակից բոլոր պետութիւնների մէջ ընդհանուր առմամբ գոյութիւն ունի երեք տեսակի քաղաքական կազմ՝ միահեծան ինքնակալութիւն (բրտնակալութիւն), սահմանադիր միապետութիւն և հանրապետութիւն:

Այդ երեք ձևերից զին է աւելի նպաստաւոր պրօլետարիատի, նրա սօցիալիստական բանակի զարգացման համար. այլ խօսքով՝ նրա ինքնուրոյն դասակարգային շահերի յառաջխաղացութեան համար:

Այդ հարցին պատասխանելու համար կարևոր է ծանօթանալ վերի յիշած երեք պետական կազմերի էութեան հետ առանձին-առանձին:

Միահեծան կառավարութիւնը կամ բռնակալութիւնը այսօր եւրոպական պետութիւնների շարքում գոյութիւն ունի միմիայն այնպիսի յետամնաց երկրներում, որպիսին են Ռուսաստանն ու Թիւրքիան: Միահեծանութեան դէպքում կառավարութեան ամբողջ ղեկը գտնւում է ինքնակալի ձեռքին, որը երկրի գործերը առաջ է տանում իր բերաւոր հաւատարիմ ծառայ մինիստրների, չինովնիկների ձեռով: Պետական երեք զխաւոր հաստատութիւնները, ինչպիսին են՝ օրէնսդրական, վարչական և դատաստանական, ենթարկւում են միևնոյն մարմնի կամ անձի (օրինակ՝ ինքնակալի) կամքին, որ ժողովրդի համար ահագին պատուհաս է: Ինչպէս իբրեւհետև միևնոյն անձնաւորութիւնը կամ մարմինը այդ երեք խոշոր հաստատութիւնները

վարելիս կարող է ըստ իր «բարի» հայեցողութեան զանազան փոփոխութիւններ, ասել է թէ զեղծումներ և կամայական բացատրութիւններ մտցնել մերթ օրէնքների, մերթ վարչական և մերթ էլ դատաստանական գործերի մէջ: Պարզ է, որ այստեղ ամեն ինչ կախած է մէկի կամ նրա սիրեցեակների քմահաճոյքից:

Ինքնակալութիւնը ծառայում է միմիայն ինքնակալի և ժողովրդի մի չնչին մասի (հողի և կապիտալի մագնատների) շահերին. նա երկիրը լցնում է միահեծանի ոտները լիզող չինովնիկների և այլ տղրուկ պաշտօնեաների վոհմակով, որ ամեն պարագայում ոտնաթակ է տալիս հարստահարած ժողովրդի առանց այն էլ բռնաբարւած իրաւունքները:

Ինքնակալի կամքը շատ աւելի բարձր է ժողովրդի կամքից: Բայց միթէ պետութիւնը ինքնակալի և նրա համարգների համար է: Ո՛չ: Պետութիւնը պիտի ծառայէ ժողովրդին, բայց հէնց ժողովրդի շահերն են, որ աւելի քան ոտնահարւում են ինքնակալ երկրներում:

Ժողովրդի ստորին խաւերի, խեղճ ու կրակ գիւղացիութեան և բանտրութեան արնախում թշնամիներին, հարուստ հողատերերի և կապիտալիստների բարեկամն է միահեծան պետութեան կառավարութիւնը: Այդ կառավարութիւնը ժողովրդի լայն խաւերը պահում է խաւարի ու տգիտութեան մէջ, որպէսզի աւելի լաւ կարողանայ շահագործել նրանց:

Միահեծան կառավարութիւնը պիտի տապալել. նա պրօլետարիատի ամենակատաղի ձնշողն ու շահագործողն է, նրա բացարձակ թշնամին:

Սակայն ի՞նչ է ներկայացնում իրանից այսպէս կոչւած սահմանադիր միապետութիւնը:

Կառավարութեան գլուխն է կանգնած զարձեալ

միապետը, որի իրաւունքները այս գէպքում՝ որոշ հաստատուած սահմանափակւած են: Օրէնսդրութեան գործը գտնւում է ներկայացուցչական պալատի կամ պարլամենտի ձեռքին, բայց վերջինս լիազօր մարմին չի ներկայացնում: Բացի պարլամենտից գոյութիւն ունի և մի աւելի բարձր հիմնարկութիւն, որ ժողովրդի տիրող, բուրժուական դասակարգի ներկայացուցիչն է: Այդ մարմինը Անգլիայում կոչւում է լորդերի (իշխանների) պալատ, ուրիշ երկրներում, ինչպէս Ֆրանսիայում—սենատ *). մի խօսքով դա վերին կամ բարձր պալատն է:

Առանց վերին պալատի համաձայնութեան և միապետի հաստատութեան ոչ մի կարգադրութիւն, որ առնում է ժողովրդական ներկայացուցչութիւնը (կամ ըստորին պալատը), չի կարող ոյժ ստանալ և օրէնք դառնալ: Այսպէս օրինագծերը մեծ ճանապարհորդութիւն են կատարում, մինչև որ «գտնւում են», խուզւում, մարւում, ապա լոյս աշխարհ տեսնւում. այն էլ ո՞վ գիտէ, տեսնւում են, հրատարակւում թէ ոչ:

Շատ սահմանադիր—միապետական երկրներում մինիստրները (գործադիր մարմին) հաստատւում և արձակւում են իրանց պաշտօններից միապետի կողմից: Միապետն է, որ պատերազմ է յայտարարում և խաղաղութեան դաշն կապում:

Այդպիսի պետութիւնների պարլամենտները ժողովրդի հարազատ ներկայացուցչութիւն չեն կարող համարւել, քանի որ ընտրողական իրաւունքը ունենում է շատ թերի կողմեր: Ժողովրդի տիրող մասի կամ բուրժուազիայի կամքը այստեղ խոշոր դեր է կատարում: Շատ հասկանալի է, որ բուրժուազիան՝ վախե-

*) Պէտք է այստեղ յիշատակել, որ այդ մարմինը այսօր գոյութիւն ունի և հանրապետական երկրներում:

նալով ճնշած ժողովրդի, գլաւորապէս պրօլետարիատի գրոհից՝ նրա բերնին սանձ է դնում:

Իսկ որտեղ կարող է ուժեղ պրօլետարիատը կռիւ համար լայն ասպարէզ, որտեղ կարող է նա աւելի լաւ կազմակերպել իր ոյժերը և կռիւ տանել հարստահարող բուրժուազիայի դէմ:

Ռամկավար հանրապետութեան մէջ, այն, իսկական ժողովրդապետական կամ ռամկավար հանրապետութեան մէջ, որովհետեւ այսօր կան այն տեսակ հանրապետութիւններ (Ֆրանսիան), որոնք շատ են հեռու դեռ ևս ռամկավար լինելուց:

Ինչպէ՞ս պէտք է կազմած լինի իսկական ռամկավար հանրապետութիւնը, որպէսզի նա թոյլ տայ պրօլետարիատին իր զարգացման և յառաջխաղացութեան ամբողջ թափով դուրս գալու ասպարէզ:

Ռամկավար հանրապետութեան մէջ ժողովրդի միակ և իսկապէս ներկայացուցիչը պիտի լինի մի պաշտեան պարլամենտը, որ ընտրւելու է անխտիր բոլոր քաղաքացիների կողմից. նա անկախ և ազատ է իւր գործողութիւնների մէջ. ոչ ոք, ոչ մի մարմին իրաւունք չունի խանգարելու, սահմանափակելու նրա իրաւասութիւնները: Մինիստրական (նախարարական) կազմը պիտի ընտրւի ժողովրդական ներկայացուցչութեան կողմից և նա վերջինս առաջ պատասխանատու է:

Դատաւարութիւնը պիտի յանձնւի ժողովրդից ընտրւած դատաւորներին, որոնց գործունէութիւնը և բոլոր արած քայլերը պէտք է յայտնի լինեն ժողովրդին ու նրա ներկայացուցիչներին: Թէ տեղական և թէ կենտրոնական գործերը պէտք է առաջ տարւեն դարձեալ ժողովրդի ընտրեալների միջոցով:

Մի խօսքով ամեն ինչ պիտի բղխի ժողովրդից,

ամեն բան պէտք է կատարւի նրա ներկայացուցչութեան միջոցով ու հսկողութեան ներքոյ, ներկայացուցչութեան, որ միակ բովանդակ արտայայտիչն է ժողովրդական կամքի:

Բացի այդ՝ բոլոր ընտրութիւնները, ինչ տեսակի էլ նրանք լինեն, պէտք է կայանան ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ:

Իսկական ռամկավար հանրապետութեան մէջ խօսքի, մամուլի, խղճի, ժողովների, միութիւնների, գործադուհների լիակատար և անսահմանափակ ազատութիւն պիտի լինի: Անհատը ազատ է և նրա սնձը անբռնարարելի: Ամեն մի քաղաքացու տուն անձեռնմխելի է:

Պրօլետարիատին ցանկալի և անհրաժեշտ եւ այն հանրապետական կարգերը, որը մենք աշխատեցինք ուրուագծել վերևում: Իսկական ռամկավար հանրապետութեան մէջ պրօլետարիատը ձեռք կը բերէ լայն բանւորական օրէնսդրութիւն, որը կը տայ նրան առողջութիւն՝ երկարակեցութիւն և պրօլետարիատը գգալի չափով կազատւի ստրկական դրութիւնից: Մեր փայփած 8 ժամեայ բանւորական օրն էլ, ապահովագրութիւնը ծերութիւնից, հիւանդութիւնից և հաշմանդամութիւնից, — հասկանալի է, որ հիմնաւոր կերպով կիրականանան ռամկավար հանրապետութեան մէջ: Ապա, ինկատի ունեցէ՛ք ձրի և պարտադիր կրթութիւնը, մշտական զօրքի վերացումը, անուղղակի հարկերի ջնջումը, նրանց թեթեացումն և տարեկան բաշխումը և այլն, և այլն — և դուք կը համոզւէք, որ ռամկավար հանրապետութիւնը ոչ միայն պրօլետարիատի համար, այլ և ամբողջ ժողովրդի համար մի բարիք է:

Այն, պրօլետարիատը մեծ կարիք ունի լիուրի իրա-

գործել իր տնտեսական և քաղաքական պահանջները, որքան այդ հնարաւոր է առնասարակ ներկայ բուրժուական կարգերում: Եւ նա այդ համեմատաբար աւելի հեշտութեամբ կանէ ուսմկավար հանրապետութեան օրով:

Բայց ուսմկավար հանրապետութիւնը պրօլետարիատին դեռ աւելի մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ: Դա այն է, որ պրօլետարիատը հնարաւորութիւն կունենայ լայն կերպով առաջ տանելու իր դասակարգային կռիւը:

Ռամկավար հանրապետութեան մէջ, որտեղ ժողովրդական ներկայացուցիչների պալատում իրար հետ կողք-կողքի նստած կը լինեն պրօլետարիատի և բուրժուազիայի ներկայացուցիչները, առաջինը ազատ և բացարձակ կերպով հնարաւորութիւն կունենայ իր դասակարգային հաշիւները տեսնել անհաշտ թշնամի բուրժուազիայի հետ և ամաշկարայ ցոյց տալ բուրժուական մարդասիրութեան և ժողովրդասիրութեան ամբողջ սնանկութիւնը: Նա այդպիսի վ աւելի կը խորացնէ դասակարգային ներհակութեան գիտակցութիւնը և յեղափոխական թափ ու կորով կը պատւաստէ իր կազմակերպւած շարքերին: Այդ տեսակէտից ուսմկավար հանրապետութիւնը աւելի նպաստաւոր է դասակարգային կռիւ գարգացման համար, քան թէ սահմանադիր միապետութիւնը: Ել չենք խօսում ինքնակալութեան մասին:

Զէ, մեր մօտակայ պահանջների և վերջնական նպատակի տեսակէտից ուսմկավար հանրապետութիւնը յարմարագոյն քաղաքական ձևն է և իզուր չէ համաշխարհային պրօլետարիատը ամեն տարի, Մայիսի 1-ին յիշեցնում բուրժուական աշխարհին իր այդ պահանջը:

Այսօր Ռուսաստանում կատաղի կռիւ է գնում

ժողովրդի և միջնադարեան բռնակալ կառավարութեան միջև: Յեղափոխութիւնը դեռ չի հասել իր վախճանին: Նրան գլխաւոր դարկ տուղն է սօցիալիստական պրօլետարիատը, որը իր յետևից քարշ է տալիս և ծառացնում ժողովրդի այլ յեղափոխական խաւերը: Ի՞նչ է ուզում այսօր Ռուսաստանի պրօլետարիատը: Նա ցանկանում է ունենալ իսկական ուսմկավար հանրապետութիւն, որովհետև նա շատ լաւ գիտէ և հասկանում է, որ այդ կազմը երաշխաւորելու է նրա ապագայ յաղթութիւնը, սօցիալիզմը:

Ա. Մ.—ՆԻԿԵԱՆ

ԿՈՐՁԻ

ՄԻԼԻՏԱՐԻՉՄԸ!

Բաւական չէ կեղեքելը, բաւական չէ թալանելը, բաւական չեն նւաճումները, անհրաժեշտ է ունենալ միշտ կազմ ու պատրաստ մի հսկայական ոյժ այդ բոլորի արդիւնքը իւրացնելու և անվտանգ կերպով մարսելու՝ այս է բուրժուական կարգերի ամբողջ էութիւնը, այսպէս են մտածում թագակիր աւագակները, այսպէս է ըմբռնում իր դերը պետութեան դեկը իր ձեռը առած բուրժուազիան, լինի դա հանրապետական Ֆրանսիայում և Ամերիկայում, լինի դա սահմանադրական Գերմանիայում, թէ միահեծան Ռուսաստանում: Ամեն տեղ բուրժուազիան պետական ղեկավարող կազմը իր հլու հպատակը դարձրած զգում է իրան մի հսկայական բերդում: Նա ամրացրել է իրան մի անուշիկ ամրոցում, որի անունն է միլիտարիզմ-զօրքը, նաւատորմը և այլն: Բերդ է դա կերտւած ժողովրդի ծով քրտինքով ու թափւած արիւնով: Ամրոց է, որի մի չնչին շարժացքը անգամ զրկում է միլիոնաւոր մայրեր հարազատներից, կանայք-ամուսիններից, երեխաներ-հայրերից:

Զօրքի միջոցով բուրժուազիան և նրա հաւատարմատար պետութիւնը զրկել և զրկում են ազգութիւններ իրանց անկախութիւնից, խլում են նոցա հարստութիւնը: Միայն Ռուսաստանի ինքնակալները չեն, որ տիրել են մի շարք ազգութիւնների նրանց ստրկացնելու համար: Քաղաքակրթւած Անգլիան է, որ չքաւորութեան մի վայր է դարձրել Իռլանդիան. նա

էր, որ խեց Բուրերի անկախութիւնը Տրանսվալի հաւուստ հանքերի հետ:

Զօրքի միջոցով Գերմանիան ճնշել ու փշրել է ազատագրական այս հսկայական շարժումը, որը անւանում է Ֆրանսիական յեղափոխութիւն: Մի շարժում, որը կոչւած էր միլիոնաւոր ժողովուրդը ազատել սովի և բռնութեան ճիրաններից *): Այդ զօրքի ուժով շլացած Գերմանական կայսրը այս տարի ցրեց պարլամենտը, որովհետեւ ժողովրդի ներկայացուցիչները—Սօցիալ.—Դեմօկր. մերժեց միլիոններ տալ զօրքի և հաւատորմի համար: Գերմանական կայսրն է, որ ամեն բոլի սպառնում է մեր երկրի ազատագրական շարժման:

Զէնքի և զօրքի միջոցով է, որ եւրոպական բուրժուազիան դեռ մօր արգանդում խեղդել է ցանկացել և շարունակում է խեղդել բանւորական հսկայ շարժումը: Ո՞վ չի յիշում «մարդասէր» Ֆրանսիայի կառավարութեան ձեռքով Լիմօժ քաղաքում կազմակերպւած սպանդանոցը, այդտեղ դորժադուլ արած բանւորութեան արիւնն էր, որ 3 տարի առաջ բարրիկադներով այս հոսեց: Ո՞վ չի զարչում ամբողջ էութեամբ, երբ կարդում է «խաղաղասէր» Ամերիկայի քաղաքի փողոցներում—Ջիքադօյում-կառարւած մասսայական սպանութիւնները: Այստեղ ևս բանւոր դասակարգն էր, որ իր կուրծքը դրել էր թնդանօթների առաջ:

Իսկ Ռուսաստանը, նրա մասին խօսել անգամ աւելորդ է: Ամենահետընկած քաղաքն անգամ դժբախտութիւն է ունեցել տեսնել իր փողոցները ներկւած ազատութեան համար, մի կտոր հացի համար կռուող

*) Գերմանական զօրքն էր, որ Ֆրանսիայի բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տաւ փշրեց Գոմուսան—մի ժամանակաւոր կառավարութիւն, որը ղեկավարում էր Ֆրանսիայի ազատագրութեան զօրքը:

մարտիկներին արիւնով: Արիւնը հոսել է Բաթումի, Գօրու, Թիֆլիզի, Բաքւի փողոցներում: Թարմ արիւնի հոտ է գալիս Գուրիայի հովիտներից: Մնացել է արդեօք լայնածաւալ Ռուսաստանում մի բախտաւոր անկիւն, ուր թափւած չլինի մարդկային արիւնը:

Միլիտարիզմի տենդային զարգացումը սկսւում է այն օրից, երբ տեխնիկայի զարգացման շնորհիւ արդիւնաբերութեան չափերը անսպասելի կերպով մեծանում են: Բուրժուազիան շուկայ է որոնում իր ապրանքները սպառելու: Բոլոր երկրների բուրժուազիան աչքերը տնկում են յետամնաց երկրների վրայ: Աֆրիկան, Ասիան դառնում են բուրժուազիայի աչքում մի իւզոտ պատառ: Կեանքի և մահու գնով մրցում է Անգլիայի բուրժուազիան գերմանականի հետ, գերմանականը— ֆրանսիականի հետ. այս բոլորը առանձին-առանձին ամերիկականի հետ: Միենոյն պատառի ձգտողներին մէջ կռիւն անխուսափելի է և կողմերը գինւում են: Ստեղծւում է նաւատորմը, այդ լողող ամրոցները և զինարանները: Որքան արդիւնաբերութիւնը զարգանայ, բուրժուազիան այնքան պիտի ձգտի դէպի այդ բիրտ ոյժը. այդ մի պահանջ է:

Սակայն այդ պահանջը—բուրժուական կարգերի պահանջը, ծանրանում է իր ամբողջ ծանրութեամբ առանց այն էլ կեղեքւած ժողովրդի շինքին...

Հէնց այդ գէնքերի փայլից շրացած՝ Ռուս միապետութիւնը՝ մի կողմից մի քանի բախտախնդիրների գրպանները լցնելու համար, միւս կողմից Ռուսաստանի Մեծ յիգափոխութիւնը խեղդելու նպատակով՝ սկսեց ճապոնական պատերազմը, որը և դարձաւ սրա գերեզմանը: Հարիւր հազարներով զոհեր աւին Ռուսաստանի ժողովրդները: Յրաից, սովից կոտորւում էին Հեռու Արեւելքում իլիծաւոր: Մայրեր զրկւած են այժմ ի-

րանց զաւակներից և մատնւած սովի ճիրաններին: Այո՛, այս բոլորը միլիտարիզմի զոհերն են:

Մեր եղբայրներից ամենաընտիրները տնքում են այժմ բանտերում, տաժանակիր աշխատանքի վայրերում. փթում են կեղտի և հիւանդութիւնների մէջ: Այդ բոլորը նոքա ստացել են աշատութեան փոխարէն: Ի՞նչն է շղթայել դրանց այդտեղ:

Զօրքը:

Որքան քաղաքակրթւած է երկիրը, որքան ժողովուրդը քաղաքականապէս հասունացած է, այնքան այդ միլիտարիզմ անւանւած ժանդարտի հետեանքները կարծես թէ թեթեւանում են: Բայց այդ թեթեւութիւնները այնքան աննշան են չարիքի մեծութեան առաջ, որ բոլորովին չեն նկատւում, մանաւանդ երբ ժողովրդի լայն խաւերը զգում և ճանաչում են իրանց մարդկային իրաւունքները:

Հանրապետական Ֆրանսիան, զիջելով ժողովուրդի պահանջին, լինւորների ծառայութեան ժաժանակը, հասցրել է երկու տարուայ, Զւիցերական հանրապետութիւնը հետ է կանգնել մշտական զօրքից և մտցրել ժողովրդական միլիցիա*): Ռուսաստանը Կրօնշդատի, Սկաստոպօլի և ուրիշ տեղերի զօրքերի ապստամբութիւնից յետոյ սկսել է զիջումներ անել:

Այս երկրներից և ոչ մէկում, նոյն իսկ ժողովրդական միլիցիա ունեցող Զւիցերիայում, բանտը դասակարգի գլխից անպակաս չէ գնդակների տարափը և սկիւր: Զւիցերական, ժողովրդական, սակայն մեղմակալան միլիցիան էր որ 1903 թւականին ժընէվի փողոցներում զալպեր էր տալիս գործադուլ արած բան-

*) Ժողովրդական միլիցիան կազմւում է որոշ հասակի հասած քաղաքացիներից: Ծառայութեան վայրը ծննդավայրն է: Զէնքը միլիցիաները պահում է միշտ իր տանը, ստանում է պետութիւնից փամփուշտներ վարժելու համար: Ծառայում է մի քանի տարի, տարին 4—5 շաբաթ: Մշտական զօրք չունի:

ւորներէ վրայ: Վէյլէ (Vevey) քաղաքումն էր, որ հէնց մի ամիս առաջ Զւիցերիայի այդ «օրինակելի» կառավարութիւնը ժողովրդական միւլիցիայի գունդերը փողոց նետեց բանւորական գործադուլը ճնշելու:

Ազատասէր Ֆրանսիան է, որ ամեն տարի մայիսի 1-ին տասնեակներով քաղաքացիներ է նետում բանտը միլիտարիզմի դէմ պրօպագանդա մղելու համար: Սօցիալիստ Գ. Հէյլէն էր, որ անցեալ տարի մայիսի 1-ին, մի հակամիլիտարիստական թուլացիկ ըստօրագրելու պատճառով իր ընկերներով դատապարտեց չորս տարւայ բանտարկութեան:

Այս բոլորը՝ քար սեղմած իրանց կրծքներին՝ տանում են Եւրոպայի մեր ընկերները: Նոքա տեսել են անցեալ տարի մայիսի 1-ին Փարիզի փողոցները: Փարիզը պատերազմական դրութեան մէջ էր: Փողոցները, հրապարակները պատերազմի դաշտ էին սերկայացնում:

Ֆրանսիայի բոլոր անկիւններից զօրքը թափել էին Փարիզ: Ի՞նչ էր պատահել: Ֆրանսիայի բանւորութիւնը իր համագումարում 1904 թւին որոշել էր՝ «1906 թւականի մայիսի մէկից 8 ժամից աւել չ'աշխատել»: Պրօլետարիատը մտադիր էր իրագործել իր այդ պահանջը: Ֆրանսիայի բուրժուազիան մի սոսկալի աղմուկ էր բարձրացրել:

Օգնութիւն, բանւորութիւնը սօցիալիստական յեղափոխութիւն պիտի անի, նա պիտի խլի մեր սեփականութիւնը:

Գերմանիան էլի այդ դէպքում խուլ չը մնաց: Ֆրանսիայի այդ դարեւոր թշնամին մոռացաւ ամեն ինչ և շտապեց օգնութեան, նա անագին թուով զօրք փոխադրեց Ֆրանսիայի սահմանազուխը: Բանւոր դասակարգի դիմաց Ֆրանսիական բուրժուազիան կրկին անգամ օգնութիւն էր կոչում իր թշնամուց: Այդ օրերը

միլիտարիզմը ամբողջ իր հասակով փռել էր իր թևերը Փարիզում:

Իսկ Ռուսաստանը:

Ո՞վ չի ծանօթ նրա դիւային քաղաքականութեան:

Միթէ դուք չէք կորցրել եղբայրներ Հեռու Արևելքում, պատերազմի ժամանակ: Ի՞սկ խաղաղ օրերին: Միթէ ձեր զաւակները, ձեր եղբայրները, ձեր ամուսինները Կովկասից չեն քշում հեռու հիւսիս, Բալտեան երկիր: Այո, դուք նրանց վերադարձին կամ կարօտ էք մնում, կամ նրանք վերադառնում են հիւանդ, կմախք դարձած:

Սորամանկ և անգութ կառավարութիւնը Կովկասցուն քշում է հիւսիս, լեհացուն Կովկաս, Պետերբուրգի նահանգից Անդրկասպեան երկիրը: Նա ծախսում է խոշոր գումար նորակոչ զինւորներին ծննդավայրից հեռու վայրեր փոխադրելու համար: Նրա համար փոյթ չէ, որ Կովկասցի երիտասարդը չի կարող յարմարել հիւսիսի պայմաններին: Մեր եղբայրները մեռնում են թոքախտից: Կարմրաթուշ, առողջ գնում են, հիւանդ, նիհարած, դեղնած վերադառնում: Պետութեան համար մի բան միայն կարեւոր է: Կովկասցի զինւորը կովկասցու վրայ հրացան չի պարպիլ, լեհացին լեհացու վրայ ուրեմն ուղարկենք լեհացուն Կովկաս, որ նա տգէտ լինելով՝ զոհ գնայ կառավարութեան խարդախութեան: Ամեն օր նրա ականջին փսփսում են՝ մի խնայիր, որովհետեւ դրանց զաւակները քո ծնողներին չեն խնայում:

Սպանիւր, որովհետեւ հրէա է, նա քեզ ծծում է:

Եւ խեղճը հաւատում է... նա կորցնում է հաւատը, բայց դեռ վերջնականապէս չի կորցրել:

Արդ, ինչպէս ազատուենք այց միլիտարիզմ կոչւած հրէշի ճանկերից:

Զօրքը մասնաւոր սեփականութեան (Մանթաշեանների, Նօբէնների մադանների, մեքենաների և կալածքների) պաշտպանն է: Եթէ չը լինի մասնաւոր սեփականութիւն, այսինքն՝ միջոց ուրիշին կեղեքելու, էլ ինչը պիտի պաշտպանի զօրքը, էլ ինչո՞ւ համար Աֆրիկայի շուկայի համար պիտի պատերազմել: Ուրեմն երկրի թէ ներքին և թէ արտաքին կեանքում միլիտարիզմը ներկայանում է իբրեւ մասնաւոր սեփականութեան անբաժան հետեանքը: Մասնաւոր սեփականութիւնը կանհետանայ միայն սօցիալիստական կարգերի օրով, երբ կազմակերպւած պրօլետարիատը կը խլի կառավարութեան դէկը, քարուքանդ կանի շահագործելու բոլոր ճանապարհները, կը խլի մասնաւոր ձեռքերից հանքերը, գործարանները, հողը և առհասարակ արդիւնաբերութեան բոլոր միջոցները և կը դնի ամբողջ ժողովրդի տրամադրութեան տակ:

Այդ պայմանում միայն զէնքը կը դառնայ միանպէտք գործիք և թող նա ժանգոտի ու փշանայ:

Իսկ միջին այդ, միջին այդ երանելի օրը:

Միջին այդ մենք զգոյշ պիտի լինենք, որ զո՞հ չը դառնանք բուրժուազիայի խարդախութեան: Մեզ շարունակ ասում են, թէ զօրքը հարկաւոր է դրսի թշնամու հետ կռելու համար: Բայց, աւանդ, մենք տեսնում ենք, որ դա մի պոչաւոր սուտ է: Սուտ է, որովհետեւ մենք լսել ենք ուսմ միապետութեան հռչակաւոր կոչը՝ «մամուլուշտները չը խնայել»: «Փամուլուշտները չը խնայել» հէնց սոված ուսմ մուժիկի համար: Սուտ է, որովհետեւ մենք անթիւ անգամ տեսել ենք արիւնլայ պատկերներ հէնց Ռուսաստանի սահմաններում, հէնց մեր քաղաքում, մեր գիւղում: Տեսել ենք ինչպէս զօրքը սպանում է գործադուլ արած բանւորներին: Տեսել ենք, ինչպէս զօրքը սպանում է գիւղա-

ցուն կալածատիրոջ պաշտպանելու համար: Տեսել ենք, երբ զօրքը ճնշում է ամեն մի ազատ քայլ... Բուրժուազիան և կառավարութիւնը մշտական զօրքը պահում են և «ներքին թշնամիների» համար, մեզ՝ մեր եղբայրների ձեռքով կոտորելու համար:

Զօրքը գործիք է պետութեան ձեռքում այն դէպքում, երբ նա մշտական է, կազմ և պատրաստ կազարմաներում, կապւած երկաթեայ կարգապահութեամբ: Նա կորցնում է այդ յատկութիւնը, երբ նա դառնում է ժողովրդական միլիցիա: Միլիցիականը չի կտրում իր կապը հասարակութիւնից, ընտանիքից, սա ապրում է նոյն կեանքով, նրան հեշտ չէ հանել սովեակների դէմ, որովհետեւ հէնց ինքն է գրանցից մէկը:

Բուրժուազիայի տիրապետութեան օրով միլիցիան չարիքներից ամենափոքրագոյնն է, բայց և այնպէս այդ չարիքի հետ սօցիալ-դեմօկրատիան ոչ թէ միայն ստիպւած է հաշտուել, այլ և պահանջել, որ մշտական զօրքը փոխւի ժողովրդական միլիցիայի: Միլիցիան էլ չարիք է, որովհետեւ մենք տեսնում ենք, որ Շվեյցարիայի պէս երկրում միլիցիան գնում է գործաթողների դէմ. դա մէջջանական, մանր բուրժուական հասարակութեան պատիճանաչափն է, անխուսափելի բուրժուական կարգերի սահմաններում:

Այդպէս չի կարող լինել մի խոշոր արդիւնաբերական վայրում, որովհետեւ այդտեղ պրօլետարիատը ունի մի խոշոր զանգւած. ամեն մի բանւոր և միլիցիական է, ուրեմն այդպիսի վայրերում պրօլետարիատը միշտ զէնքը ձեռին կարող է պաշտպանել ազատ գործադուլի իրաւունքը, երբ դրան վտանգ է սպառնում մասնաւոր սեփականութեան սիրահար մանր և խոշոր բուրժուական տարրերի կողմից:

Բայց եթէ միլիցիան էլ չարիք է, մի՞թէ չէր

կարելի և դրա դէմ գնալ: Միլիցիան գէնք է տալիս պրօլետարիատի ձեռքը և այդ գէնքը միշտ նրան պաշտպանն է հանդիսանում, բուրժուազիայի և նրա ծառայ կառավարութեան ոտնձգութիւնների դէմ: Մասնաւոր սեփականութիւնը ժողովրդական դարձնելու համար հարկաւոր է գէնք, որպիսի բուրժուազիան հպատակելի մեծամասնութեան կամքին: Այդ մէկ. երկրորդ, բուրժուազիան մեզ միշտ վախեցնում է դրաի թշնամիով, մենք պատրաստ պիտի լինենք զինակիր ձեռքով հանդիպել այն դրաի թշնամուն, որը բարբարոս է*) և գալիս է ջնջելու մեր կուլտուրան, խլելու մեր սեփականութիւնը: Այսպիսի թշնամին վտանգ է սպառնում մեր և մեր մտերիմների կեանքին, այդ գէպքում և միայն այդ գէպքում, մենք ստիպւած կը լինենք գէնք բարձրացնել դրաից եկածի դէմ: Բոլոր ուրիշ պարագաներում բուրժուազիան է, որ իր շահերի համար ուզում է մեզ նետել պատերազմի դաշտը իր գրպանը լցնելու համար, այդ գէպքում մենք կը կերպագանք մեր գէնքը ուղղել աւելի շուտ մեր բուրժուազիայի կրծքին, քան հարևան երկրի մեր եղբայրներին:

Մեզ, կովկասեցիներին համար, ժողովրդական միլիցեան ունի մի ուրիշ կարևոր հանգամանք: Դրանով մենք վաշտում ենք մեր երկրից մի զօրք, որը այսօր կաշառում է թուրքերին հայերին կոտորելու համար, իսկ վաղը հայերից թուրքերից կոտորելու: Ժողովրդական միլիցիան կլինի այն միջոցներից մէկը, որով կը կարողանանք խաղաղացնել երկիրը:

Սակայն մշտական զօրքի վերացումը ունի և մի ուրիշ կարևոր կողմ: Միլիտարիզմը ծծում է ժողովրդի

*) Օրինակ՝ ներկայիս Տաճկաստանը, Չինաստանը:

ամբողջ աշխատանքը: Երեւակայեցէ՛ք: Ռուսաստանում պահւում է իրրեւ մշտական զօրք 1,200,000 մարդ: Այդ հսկայական բանակը մատնւած է կատարեալ անգործութեան:

Աւելին, զօրքի մէջ այդ երիտասարդ ոյժերը դարձնւում են հասարակութեան համար միանգամայն անպէտք, այդտեղ բթանում է նրանց ուղեղը, վարակւում են զանազան վատ հիւանդութիւններով, ապա և այդ տարածում գիւղերում, ընտանիքում. իսկ պատերազմի ժամանակ մենք զրկւում ենք մեր ամենալաւ սերնդից:

Ձիււորակոչութեան ժամանակ չափում ընտրում են ամենալաւ կազմաւած ունեցողներին, առողջներին: Արդէն ապացուցւած փաստ է, որ այդ առողջ երիտասարդների մեծ մասը վերադառնում է տկար, կազմուածքը թույլ, աշխատելու անընդունալ: Նկատւած է նոյնպէս, որ պարբերաբար զինւորների չափերը փոքրացնում են: Դա նշանակում է, որ մի կողմից կազարման իր սոսկալի պայմաններով, միւս կողմից բանւորութեան տաժանակիր աշխատանքը, գործարանի անտանելի պայմանները տանում են մարդկութեան դէպի այլասեռում:

Թողնենք մի կողմ, որ այդ 1,200,000 երիտասարդները մնալով իրանց տներում առնուազն կաշխատէին իրանց ընտանիքների համար, ուրեմն և հասարակութեան տարեկան 36 միլիոն բուրլի, հաշւելով 300 աշխատանքի օր մի տարում և օրեկան աշխատավարձ 10 կոպ.: Ասում ենք, թողնենք այդ և զիմենք նրան, թէ որքան է նստում մեզ այդ զօրքը:

Ռուսաստանը 1902 թւականին ծախսել է զօրքի համար 443 ու կէս միլիոն բուրլի, իսկ ժողովրդի լուսաւորութեան համար (ժողովրդական դպրոց, միջնակարգ դպրոց, համալսարան և այլն), ընդամենը 1905

Թւականին 44 միլիոն: Ուրեմն գնդակի և թնդանօթի և վառօղի համար 10 անգամ աւել, քան դպրոցի:

Եթէ այդ գումարը բաժանելու լինենք հաւասար կերպով քաղաքացիների մէջ՝ կը ստանանք, որ մեզանից ամեն մէկը միլիտարիզմ կոչւած կռուքին տարին տալիս է մօտ 4 բուլբի հարկ:

Պարզ է, որ ով կողմնակից չէ ճնշումներին, հաւածանքներին և կոդապուտներին, նա դէմ պիտի լինի մշտական զօրքին:

Ով չի ուզում թափել իր եղբայրների արիւնը նա դէմ պիտի լինի միլիտարիզմին:

Ով չի ուզում գործիք դառնալ բռնապետների կամ բուրժուազիայի ձեռքում ամեն մի ազատ քայլ ճնշելու համար, նա կողմնակից պիտի լինի չարիքի փորձագոյնին, ժողովրդական միլիցիային:

Ով չի ուզում իր երիտասարդ ոյժերը վասնել անգործութեան մէջ և յաճախ աշխն թափել բուրժուազիայի շահերի համար, նա ամբողջ ոյժով պիտի բողոքէ և կուէ միլիտարիզմի դէմ: Նա լաւ պիտի յիշէ, որ միլիտարիզմի արմատական ոչնչացումը կը լինի միայն սօցիալիզմի օրով:

Այդ պատճառով էլ մենք չենք դադարում կռւել միլիտարիզմի դէմ և Մայիսի 1-ին աւելի բարձր ենք հնչեցնում մեր ձայնը՝

Կորչի միլիտարիզմը!

Կեցցէ սօցիալիզմը!

Մ. ՌՕՖԵՐՏ

Մ Ր Ր Ի Կ

(Տաճ)

Ընկնում է լուծը ձմրան անհամբոյր.
Կանաչ գարունն է քայլում անդողդող,
Սյգը պատռելով խաւար վարագոյր՝
Մեծ Ռուսաստանին յղում է իր շող:

Ու նա բացում է կապոյտ ճամնանշով,
Յըցում դէպի վեր հրաշէկ պսակ.
Դա փոթորիկ է արնաներկ սրով
Մեզ ազատութեան աւետում հրկշտակ:

Ողջո՞յն քեզ, մրրիկ, թռի՛ր սրաթև,
Յընցիւր գլուխդ ամուր ու հօր.
Ծիւ աշտարակներ քանդի՛ր քո առջև,
Յրի՛ր անտառը հսկայ, դարևոր:

Անեզր ծովը շարժի՛ր մինչ յատակ,
Մինչև խորին ծոց յուզի՛ր ահալի.
Մեր կերոնների կենդանի կրակ—
Հրդեհ դարձրո՛ւ մեծ ու վիթխարի:

Քեզ պատրաստում ենք արժանի ողջոյն.
Զարկի՛ր, դառնալով մի ահակոյնակ,

Մենք ազատութեան երգերով հնչուն
Խուլ կը դարձնենք որոտ ու կայծակ:

Գեղ գանգուրներդ ծածանի՛ր հպարտ,
Մենք քեզ ընդառաջ կելնենք քաջաբար,
Դէպ տարրերային և աննկուն մարտ
Դրօշ կը բռնենք կասկարմիր ու վառ:

Այնտեղ կը գրենք՝ «կորչի՛ բռնութիւն»!
Պէտք չեն խայտառակ կապանք ու շղթայ-
Արատի գահը—զրահով կանգուն—
Մենք կը տապալենք մեր կոշով անահ:

Եւ մեզ կը ծնւի օգնութիւն խիզախ,
Մենք կը փորփորենք քար սալայատակ,
Քարով թշնամուն կը դիմենք անվախ,
Կը կառուցանենք ամրոց—յաղթանակ:

Զուր է սպառնում չնչին բռնաւոր
Մեզ օրհասական արձիճ-կարկուտով.
Մենք վերք ենք փնտրում սուրբ և պատ-
լաւոր,
Մենք մարտ ենք տենչում անվեհեր սրտով:

ՆՈՐԵԿ

ԿԱՐԼ ՄԱՐԿՍ

Կարլ Մարքսը ծնւել է Հոենհոսեան գաւառի Տրիր քաղաքում 1818 թ. մայիսի 15-ին: Նրա հայրը փաստաբան էր, բարբի ընտանիքից և որդու ծնւելուց մի քանի տարի առաջ, արտաքին հանգամանքների ճնշման տակ ընդունել էր քրիստոնէութիւն: Պատանի Կարլը գիմնազիան աւարտելով իր հայրենի քաղաքում, 1835 թ. սկսեց յաճախել Բօննի, իսկ յետոյ Բերլինի համալսարանի իրաւաբանական դասընթացքը: Իրաւաբանութիւնը նրան այնքան էլ չէր հետաքրքրում, նըրան աւելի գրաւում էր ֆիլիսոփայութիւնը և պատմութիւնը: Մարքսը երբէք քննութիւն չբռնեց իրաւաբանութիւնից, որի փոխարէն նա ստացաւ ֆիլիսոփայութեան դոքտորի աստիճան (1841 թ.) և հօր թախանձանքով Բօննի համալսարանի ֆիլիսոփայութեան ուսուցչապետութեան համար դրաւ իր թեկնածութիւնը: Մարքսը, որ արդէն վաղուց գիտէր, թէ ինչպէս ողորմելի է գերմանական համալսարանի պրօֆէսսորի դերը, վճռեց, որ հրապարակախօսի դերում նա անհամեմատ աւելի մեծ գործ կարող է կատարել որպէս յեղափոխական, քան պրօֆէսսորի դերում: Հէնց այդ ժամանակներում սկսեց հրատարակել «Հոենհոսեան թերթը», որի շուրջը համախմբւել էին գերմանական դեմոկրատիայի և սօցիալիզմի ամենալաւագոյն տարրերը:

Մարքսը մասնակցեց այդ թերթին սկզբում (1842 թ.) որպէս աշխատակից, ապա դարձաւ խմբագրութեան անդամ, իսկ քիչ յետոյ դարձաւ խմբագիր: Թերթը ամբողջովին նրա ձեռքն անցաւ: Մարքսը եռանդով պաշտպանում էր գիւղացիութեան և աղքատ

դասի շահերը. անագին աղմուկ լարձրացաւ, որի համար և թերթը փակեց մի քանի ամսից յետոյ:

Արգէն 25 տարեկան՝ Մարքսը ամուսնացաւ օր. ժէննի Փօն Վեստֆալէնի հետ, որի վրայ նշանւած էր դեռ 17 տարեկան հասակում, երբ գիմնազիստ էր: Երբ թերթի փակումից յետոյ նրան աքսորեցին հայրենիքից, կինը ուրախութեամբ հետեց նրան, արհամարհելով խեղճութիւնն ու չքաւորութիւնը, որ սպասում էր նրանց:

Փարիզում Մարքսը զբաղեց բուրժուական քաղաքատնտեսութեան ուսումնասիրութեամբ:

Նա անձնական յարաբերութեան մէջ մտաւ ֆրանսիական յայտնի սօցիալիստներին հետ:

Այդ ժամանակ էլ նա շատ մօտեցաւ Ֆրիդրիխ Էնգէլսին, Հանրիխ Հէյնէին և Պրուդօնին:

Ֆրանսիայում այդ ժամանակ գոյութիւն ունէր երկու տեսակ սօցիալիզմ—բլանկիզմը և պրուդօնիզմը: Բլանկիզմը իրեն համարում էր ֆրանսիական մեծ յեղափոխութեան, Եակորինեան կլուբի աւանդապահը, ջանում էր խիստ կենտրոնացրած դադարի կազմակերպութեան միջոցով առաջ բերել ապստամբութիւն, ձեռք բերել քաղաքական իշխանութիւն, հաստատել դիկտատուրա և մտցնել սօցիալիստական կարգեր:

Պրուդօնը շատ լաւ հասկանում էր, որ դժուար է յոյս դնել այդպիսի տաքտիկայի յաջողութեան վրայ, բայց ինքն էլ ընկնում էր նախազանցութեան մէջ, միանգամայն մերժելով քաղաքական կռիւը. նա կամենում էր ազատել մարդկութիւնը կապիտալիզմի ճիրաններից խաղաղ ճանապարհով, այն է ժողովրդական բանկերի ընկերակցութիւնների և այլ միջոցով:

Մարքս-Էնգէլսը յաջողութեամբ ուսումնասիրում էին այդ շարժումները: Էնգէլսը մօտիկ ծանօթ լինե-

լով անգլիական բանւորական շարժման հետ, իր մտաւոր հարստութիւնից բաժին էր հանում Մարքսին և ինքն էլ փոխադարձաբար ազդուում նրանից:

Մարքսը այն գիտնականներից չէր, որոնք գիտութիւնը ուսումնասիրում են՝ գիտութիւն ուսումնասիրած լինելու համար. նա մի մաբոնչող էր, և նրա համար անտանելի էր միշտ զբաղել սոսկ գիտութեամբ: Իր դադափարները տարածելու համար նա Արնօլթ Բուգէի հետ Փարիզում հիմնեց «Ֆրանս-Գերմանական հանդէսը», որը, սակայն, քիչ տարածելու պատճառով դադարեց առաջին Ձեռք յետոյ: Բացի դրանից Մարքսը մասնակցում էր մի բանւորական կազմակերպութեան և աշխատակցում Փարիզում հրատարակող գերմանական «Յառաջ»-ին: Թերթը արգելւում է Գերմանիայում և Մարքսը գերմանական կառավարութեան ջանքերով արտաքսւում է Ֆրանսիայից (1884 թ.):

Նա ուղևորեց Բրիւսսէլ, ուր նորից հանդիպեց Էնգէլսին:

1847 թ. Մարքսը հրատարակեց իր կարևոր աշխատութիւններից մէկը—«Փիլիսոփայութեան աղքատութիւնը», ուղղւած Պրուդօնի դէմ:

Այդ գրքի մէջ քննադատելով ֆրանսիական սօցիալիզմի ներկայացուցչին, նրա սօցիալիզմը յայտարարում է մանր բուրժուական և հրապարակ իջած՝ պըրօլետարիատը ներկայ հասարակական կարգերի հետ հաշտեցնելու համար:

Տեսական գործունէութեան հետ մի շարքում Մարքս Էնգէլսը չեն մոռանում գործնականը. նրանք Բրիւսսէլում հիմնում են մի բանւորական ընկերակցութիւն:

Այստեղ Մարքսը կարգում է իր հոշակաւոր դասախօսութիւնները՝ վարձու աշխատանքի և կապիտալի-

մասին: Այդ դասախօսութիւնները պարունակում են իրենց մէջ սաղմերը այն գաղափարների, որոնք յետոյ մշակեցին հոշակաւոր «Կապիտալի» մէջ:

Բրիւսսէլում Մարքս և Էնգէլսը աշխատակցում էին տեղական օրաթերթերում, որոնց միջոցով ազդում էին Բրիւսսէլի բանւորների վրայ:

Սակայն ամենակարեւորը նրանց յարաբերութիւնն է «Կոմմունիստների Միութեան» հետ Անգլիայում: Այդ միութիւնը, որ հրկար փորձերից յետոյ ի վերջոյ կանգ էր առել դասակարգային կռիւի հողի վրայ, մօտենում է Մարքս-Էնգէլսին, որոնք իրենց աշխատութիւնների մէջ արծարծում էին այդ հայեացքները:

«Կոմմունիստների Միութեան» Լօնդօնի կօնգրէսը յանձնարարում է Մարքս-Էնգէլսին՝ կազմել միութեան մանիֆէստը, պարզաբանել նրա դաւանած գաղափարները: 1848 թ. Մանիֆէստը պատրաստ էր. դա ամենքին լաւ յայտնի «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆէստն» է, որ վերջանում է «Պրօլետարներ՝ բոլոր երկրների, միացե՛ք» կոչով:

Փետրւարեան յեղափոխութիւնը՝ հնարաւոր դարձրեց Մարքսի վերադարձը Փարիզ:

Ֆրանսիական ժամանակաւոր կառավարութիւնը 1848 թ. մարտի 1-ին ուղարկեց նրան հետեւեալ նամակը:

Ազնիւ, անկեղծ Մարքս!

Ֆրանսիական հանրապետութեան ողջ երկիրը — ազատութեան բոլոր բարեկամների ապաստարանն է. Ձեզ արտաքսեց բռնապետութիւնը, իսկ ազատ Ֆրանսիան նորից բանում է իր սահմանները Ձեր և այն բոլոր մարդկանց առաջ, որոնք մարտնչում են բոլոր ազգերը միացնող սուրբ գործի համար: Ֆրանսիական

կառավարութեան իւրաքանչիւր ներկայացուցիչ պէտք է կատարէ իր պարտականութիւնները այս մտքով: Մեր եղբայրական ողջոյները:
Ժամանակաւոր կառավարութեան անդամ Ֆերդինանդ Ֆլօհս:

Երբ Մարքսը պատրաստում էր ճանապարհել Փարիզ, ոստիկանութիւնը ներս խուժեց նրա բնակարանը, բանտարկեց նրան և յանձնեց բէլգիական կառավարութեան հրամանը, որով Մարքսը արտաքսւում էր Բէլգիայից:

Փարիզում Մարքսը մնաց բնդամենը երեք ամիս և մայիսի վերջին ուղևորեց Գերմանիա և սկսեց դեկավարել 1848 թ. յունիսի 1-ից լոյս տեսնող «Նոր-Հռենոսեան օրաթերթը» Բէօլն քաղաքում: Այդտեղ էր և Էնգէլսը: Յեղափոխութեան ժամանակ նրանք այստեղ ահագին դեր կատարեցին իրենց թերթով: Բէալցիան օրէցօր ուժեղանում էր: Կառավարութիւնը արդէն սկսել էր հալածել իր թշնամիներին և Մարքսը, որ 1845 թ. արդէն հեռացել էր գերմանական հպատակութիւնից, 1849 թ. մայիսի 16-ին արտաքսւում է Գերմանիայից, որպէս խռովարար օտարահպատակ:

Մարքսը անցաւ Փարիզ և որովհետև այստեղ էլ յետադիմութիւնը յաղթանակել էր՝ արտաքսեց Լօնդօն (1849 թ.): Այստեղ էին հաւաքւել «Կոմմունիստական միութեան» բոլոր աշխատակաւոր դործիչները: Յեղափոխութեան տպաւորութիւնը դեռ թարմ էր, նրանք պատրաստւում էին նոր ապստամբութիւն առաջացնելու: Մարքսը հակառակ էր այդ ապարդիւն փորձերին, ուստի և նրանց մէջ առաջացաւ բաժանում: Մարքսին յաջողեց իր կողմը դրաւել մեծամասնութիւնը:

1850 թ. Մարքսը Լօնդօնում սկսում է հրատարակել քաղաքա-տնտեսական «Հռենոսեան» Նորան հանդէսը, որը

նիւթականի սղութեան պատճառով շուտով դադարում է. այնուհետեւ Մարքսը նիւթական միջոցներից դրդւած երկար ժամանակ աշխատակցում էր «Նիւ-Եօրք-Տրի-բունին» և այլ ամերիկական հրատարակութիւններին, ուր լուսարանում էր Եւրոպայի աչքի ընկնող տնտեսական երևոյթները:

Երկար տարիների ընթացքում Մարքսը փայփայել էր Եւրոպայի և ամերիկայի առաջնակարգ բանւոր-ներից մի միջազգային բանւորական միութիւն հիմնելու գաղափարը. միութիւն, որը պիտի պարզորոշ ապացուցանէր սօցիալիստական շարժման միջազգային բնոյթը և բանւորական շարժման մղիչ ոյժը պիտի դառնար: Առիթը վերջապէս ներկայացաւ: 1862 թ. Լօնդօնում տեղի ունեցաւ համաշխարային ցուցահանդէս, որին ներկայ էին պատգամաւորներ զանազան երկրներից, ի միջի այլոց և Ֆրանսիայի բանւորներից, որոնք և այդտեղ հարկ զգացին ստեղծել մի հաստատուն փոխադարձ յարաբերութիւն այլ երկրների բանւորներին հետ: Մի այլ սուրիթն էլ լեհական ապստամբութեան արիւնահեղ ճնշումն էր ցարի կառավարութեան ձեռքով: Իզուր պրօլետարները լեհերի համար օգնութիւն էին պահանջում բուրժուական պետութիւններից: Պետութիւնները խուլ էին, բանւորները զանազան երկրներում մի շարք ցոյցեր կատարեցին: Կայացաւ միտինգ և Լօնդօնում: Այդ միտինգում արծարծւեց «Միջազգային Բանւորական Միութիւն» հիմնելու գաղափարը: Ընտրւեց ժամանակաւոր Բարձրագոյն Խորհուրդ, որի հոգին Կարլ Մարքսն էր: «Ինտերնացիօնալը», որը գրեթէ շարունակութիւնն էր «Կոմմունիստների Միութեան», ամենաբարձր պատմական նշանակութիւն ստացաւ: 8 տարի շարունակ նա ղեկավարում էր բոլոր ազատագրական շարժումները Եւրոպայում. բա-

ւական ասել, որ Բարձրագոյն Խորհրդի հրատարակած բոլոր փաստաթղթերը՝ սկսած 1864 թ. Մանիֆէստից, մինչև ֆրանսիական քաղաքացիական կռիւ (1871 թ.) մասին հրատարակած Մանիֆէստը—խմբագրւած է Մարքսի ձեռքով:

Մարքսը թողել է գրական բազմաթիւ աշխատութիւններ, որոնցից կշիռնք մի քանիսը միայն. «Փիլիսոփայութեան չքաւորութիւնը» (1847 թ.), «Լիւի Բօնապարտի Բրիւմէրի 18-ը» (1852 թ.) «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆէստը» (Էնգէլսի հետ) (1848 թ.), «Քաղաքատնտեսութեան քննադատութիւնը» (1859 թ.) «Քաղաքացիական կռիւը 1870—71 թ.» և վերջապէս հոշակաւոր «Կապիտալը», որի վրայ նա աշխատել է իր ամբողջ կեանքում: Լօնդօնում վերաբնակւելուց յետոյ, նա շարունակ զբաղւած էր Բրիտանական թանգարանի անթիւ գանձերի ուսումնասիրութեամբ, որի արդիւնքն էր այդ աշխատութեան առաջին հատորի հրատարակութիւնը 1867 թ.: Համաշխարհային պրօլետարիատի աւետարանը—«Կապիտալը» Մարքսի մահամբ կիսատ մնաց, և այդ կիսատը շարունակեցին խմբագրել Ֆրիդրիխ Էնգէլսը և Կարլ Կաուցկին:

Մարքսը մեռաւ Լօնդօնում 1883 թ. մարտի 14-ին, 65 տարեկան հասակում:

Մահը վրայ հասաւ բազմավաստակ, անհանգիստ ծերունուն այն ժամանակ, երբ նա նստած իր բանւորական գրասեղանի առաջ, պարապում էր. նա աննշացաւ, շրջապատւած իր սիրելի գրքերով, որոնցից նա այնքան անգին գանձեր էր հանում մեզ թողնելու համար:

Նրա մահը խորունկ վիշտ պատճառեց պրօլետարիատի բոլոր բարեկամներին: Կարծւում էր, թէ մեր մեծ առաջնորդի մահամբ կանգ կառնէ բանւորական

շարժումը, որին նա այնքան ոյժ, առոյգութիւն ու հըմայք էր ներշնչում:

Սակայն բանտրական շարժումը չքարացաւ, նա թափով առաջ սլացաւ, միշտ փարած Կ. Մարքսի թողած աւանդներին:

Մարքսը ապրում է մեր մէջ. նա մեր դրօշակակիրն է և մեզ առաջնորդում է դէպի սօցիալիզմի յաղթանակը:



ՖԻԴԵԼԻՆ ԷՆԳԵԼՍ

Ֆրիդրիխ Էնգելսը ծնւել է 1820 թ. նոյեմբերի 28-ին Գերմանիայի Բարմէն քաղաքում, հարուստ գործարանատիրոջ ընտանիքում: Նրա հայրենիքը—Հռենոսեան գաւառը—այն ժամանակայ Գերմանիայի ամենածաղկած անկիւններից մէկն էր: Հարուստ հանքերը, Ֆրանսիայի և Անգլիայի հետ մերձաւորութիւնը, ստեղծել էին մի եռուն արդիւնաբերական կեանք, գոյացել էր պրօլետարիատի մի աչքի ընկնող թիւ, իր սեփական պրօլետարական աշխարհայեացքով, ընդդէմ ֆէօդալիզմի և բուրժուազիայի: Դա Գերմանիայի այն սակաւթիւ անկիւններից մէկն էր, որը իր վրայ խորապէս կրել էր Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ազդեցութիւնը, որպէս Ֆրանսիայի երբեմնի մի նահանգ: Եւ այդ աւանդութիւնները դեռ շատ թարմ էին Ֆրիդրիխ Էնգելսի պատանեկութեան օրերում:

Պատանի Էնգելսը հայրենի քաղաքի բէալական դպրոցի դասընթացքը աւարտելուց յետոյ, մտադրւում է անցնել համալսարանի քաղաքատնտեսութեան բաժանմունքը, այդ նպատակով նա իսկոյն և եթ մտնում է Էլբերֆելդի գիմնազիան: Սակայն ընտանեկան հանգամանքները և նոյնքան վաղ նրա մէջ զարգացած ընդդիմադրական ոգին՝ որով նա աւտում էր ամեն մի չինովնիկական կարիէրա, արգելք են լինում, նա թողնում է այդ միտքը և գերադասում է վաճառականական կարիէրան ու հասունութեան վկայականը չստացած՝ թողնում է գիմնազիան և սկսում է ուսումնասիրել փիլիսոփայութիւնը: Եւ նա միաժամանակ առանց վարձի ծառայում է մի առևտրական տան մէջ (1838 թ.): Էն-

գելսը 1841 թ. ծառայում է Բերլինում զօրքի մէջ, որպէս I կարգի կամաւոր զինուոր ու այնուհետեւ անցնում է Անգլիա. 1842—1844 թ. ծառայում է Մանչեսթեր քաղաքում մի առևտրական ձեռնարկութեան մէջ, որին մասնակցում էր նրա հայրը:

Անգլիայում, կապիտալիզմի այդ հայրենիքում, նրա առաջ բացւում են մտաւոր գործունէութեան նոր հորիզոններ: Էնգէլսը, որ մինչ այդ հիմնովին կերպով ծանօթ էր փրիսոփայութեան և քաղաքատնտեսութեան հետ, այդտեղ աւելի մօտ ծանօթանում է կապիտալիստական արդիւնագործութեան ողջ էութեան հետ, տեսնում է պրօլետարիատի տանջանքները, հիմնովին ուսումնասիրում նրա դրութիւնը և նրա պայտմական ապագան: Շուտով մենք նրան տեսնում ենք ուսույրական սօցիալիզմի ներկայացուցիչների շրջանում: Էնգէլսը այդ շրջանում աշխատակցում է Հարտիստների կուսակցան օրգան «Հիւսիսային աստղ» թերթին, Ռօբէրտ Օուէնի «Նոր բարոյական աշխարհին»: Իր յօդածների մէջ երիտասարդ վաճառական Էնգէլսը ծանր յանդիմանութիւններ է նետում վաճառականութեանը: Նա վաճառականութիւնը անւանում է «թոյլատրուած խաբերայութիւն»: «Առևտուր», «արժէք», «գին», «կապիտալ», «հողային ընտան», «աշխատանք», «մրցում» և «մենաշնորհ» հասկացողութիւնները լուրջ քննադատութեան են ենթարկւում:

Միաժամանակ նա աշխատակցում էր Մարքսի խմբագրութեամբ Փարիզում հրատարակող «Փրանս-Գերմանական Հանդիսին»: Վերջինիս մէջ լոյս տեսած յօդածներից նշանաւոր է «Քաղաքատնտեսութեան քննադատութիւնները», ուր Էնգէլսը առաջինն է, որ սօցիալիզմը հիմնաւորում է քաղաքատնտեսութեան միջոցով:

Միանգամայն այլ է նրա «Բանւոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» աշխատութիւնը: Այդտեղ նա քննադատում է օուէնիզմը *) և Հարտիզմը **), պընդում է այդ երկու ուղղութիւնների միացման արհրածեշտութիւնը մի հոյակապ բանւորական շարժման մէջ, որը տանում է դէպի մասնաւոր սեպհականութեան վերացումը—դէպի սօցիալիզմը:

«Բանւոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» գիրքը,—ասում է Կառլեկին, անդրանիկ ստեղծագործութիւնն է գիտական սօցիալիզմի՝ ոչ միայն բանւորական շարժման և ուսույրիզմի գնահատութեան տեսակէտից, այլև շարահարութեան մեթօդով: Մարդասիրական այլ երկերի պէս նա սոսկ պատկերացումը չէ բանւոր դասակարգի տանջանքների, դա կապիտալիստական արդիւնագործութեան պայտմական միտումների բացատրութիւնն է, արդիւնագործութեան՝ որհափ վերջինով պայմանաւորուած է բանւոր դասակարգի դրութիւնը»:

Այդ աշխատութեան մէջ երիտասարդ Էնգէլսի տաղանդաւոր միտքը միանգամայն անկախ արտացոլել է այն տեսակէտները, որոնք յետոյ աւելի պարզաբանւել են «Կօմմունիստական Մանիֆէստում»:

Անգլիայից Գերմանիա վերադառնալիս Էնգէլսը

*) Օուէնիզմը—անգլիական ուսույրական սօցիալիզմը—ընդհանրապէս չէր ընդունւում ոչ բանւորական շարժում, ոչ գործադուր և ոչ էլ քաղաքական կռիւ: Նա խոհեմութեան և բարեաշակամութեան դիմումն է անում արտօնեալ դասակարգերին և խոտտանում է: որ նրանց դրութիւնը գորանով չի վատանայ:

**) Չարտիզմը վարձու աշխատանքի շրջանից դուրս չէր գալիս, թէև ընդունւում էր բանւորական շարժում, միութիւններ կազմութիւն, ընտրական իրաւունք, նօրմալ բանւորական գիւղացիական տնտեսութեան ներմուծում և այլն, կան օր, մանր գիւղացիական տնտեսութեան ներմուծում և այլն, այդ ամենը ոչ թէ մասնաւոր սեպհականութիւնը վերացնելու համար, այլ որպէսզի տիրող կարգերը աւելի տանելի դարձնէ:

Փարիզում այցելում է Մարքսին, որի հետ մինչ այդ գրագրութիւն էր պահպանում: Այդ ժամանակից արդէն սկսւում է նրանց մտերիմ բարեկամութիւնը, որ այնքան կարևոր նշանակութիւն է ունենում ապագայում: Գաղափարների միանմանութիւնը միանգամայն մօտեցնում է նրանց և երկուսով ձեռք են զարկում մի գործի, որ համաշխարհային պրօլետարիատի անշեղ ուղեցոյցն է դառնում:

Մանչեստրից Բարմէն վերադառնալով, Էնգէլսը համոզւում է, որ չէ կարող ապրել հայրենի քաղաքի երկիւղած և կրօնամոլ մթնոլորդում, խիստ պահպանողական ընտանիքի մէջ: Նա թողնում է առևտրական ասպարէզը և ուղևորւում Բրիւսէլ, ուր քաղաքական հանգամանքների շնորհիւ գտնւում էր նաև Մարքսը: Այստեղ արդէն նրանք սկիզբն են դնում այն գործին, որին և վճռում են նւիրել իրենց ողջ կեանքը:

Ահա թէ ի՞նչ է ասում Էնգէլսը իր և Մարքսի գործունէութեան այդ շրջանի մասին.

«...Մենք երկուսս խիստ տարած էինք քաղաքական շարժումով, որոշ կապ ունէինք Գերմանիայի գիտակից շրջանների հետ և պարզորոշ գիտակցում էինք պրօլետարիատը կազմակերպելու անհրաժեշտութիւնը: Հէնց որ այդ պարզ որոշեցինք, այնուհետ և՛ ուսց մեր աշխատանքը: Բրիւսէլում մենք հիմնեցինք գերմանական բանւորական միութիւն և սկսեցինք «Բրիւսէլի Գերմանական թերթի» հրատարակութիւնը: Միևնոյն ժամանակ մենք կապ էինք պահպանում Բրիւսէլի դեմօկրատների հետ և Ֆրանսիական Սօց.-Դէմ. «Րէֆորմ»-ի հետ, որին ուղարկում էի տեղեկութիւններ՝ անգլիական և գերմանական շարժման մասին: Կարճ մեր կապերը արմատական ժողովրդական կազմակերպութիւնների և մամուլի հետ միանգամայն համա-

պատասխանում էին մեր ցանկութիւններին»:

Էնգէլսը և Մարքսը շուտով հրաւէր են ստանում միանալ «Արդարների Միութեանը» — ապագայ Կոմունիստական միութեան. 1847 թ. ամառը կայանում է այդ Միութեան առաջին կօնգրէսը, ուր Էնգէլսը Փարիզի ընկերների պատգամաւորն էր: Կօնգրէսի յանձնարարութեամբ 1847 թ. Էնգէլսը Մարքսի հետ գրում է Կոմունիստական կուսակցութեան Մանիֆէստը: Ահա այդ մօմէնտից Մարքս — Էնգէլսի գործունէութեան մէջ նոր շրջան է սկսւում: Նրանք անյապաղ թողնում են Լօնդօնը, անցնում Գերմանիա և Քեօլն քաղաքում հիմնում «Նոր Հռենոսեան օրաթերթը»:

Էնգէլսի կեանքի այդ շրջանի պատմութիւնը միաժամանակ և այդ թերթի պատմութիւնն է: Պատմել այդ ամենը, նշանակում է տալ 1848 թ. պատմութիւնը իր բոլոր մանրամասներով. «բաւական է միայն ասել, ասում է Կառլցկին, որ երբէք թերևս, իրենց ամբողջ կեանքի ընթացքում, Մարքս և Էնգէլս այնքան պայծառ չեն արտացոլել իրենց ընդունակութիւնները — կատարեալ զուգակցումն էր գործնական և տեսական, գիտական և քաղաքական գործունէութեան: Ո՛չ ոք աւելի վճռական մասնակցութիւն չէ ունեցել յեղափոխական կուռի մէջ, քան նրանք և ո՛չ ոք այդ կուռն նրանցից աւելի ազատ չէ եղել պատրանքներից»:

Այնուամենայնիւ յետադիմութիւնը յաղթանակում էր: Հռենոսեան գաւառի մի մասը, գլխաւորապէս հանքային րայիօնը 1849 թուակ. մայիսին բարձրացել էր հարուածելու վերահաս յետադիմութիւնը: Այդ լուրն առնելուն պէս Էնգէլսը անյապաղ շտապում է մասնակցելու այդ ճակատամարտին, սակայն ստիպւած է լինում տեսնել այդ ապստամբութեան ճնշումը: Բուրժուազիան ամենուրեք դաւաճանում էր բանւորներին:

Մայիսի 19-ին փակուում է «Նոր Հոգևորական օրաթերթը» և Մարքսը արտաքսուում: Էնգելսին խիստ հետևում էին: Նա անցավ Պֆալց և ապստամբների հըրամանատարի թիկնապահի պաշտօնը ստանձնեց: Նա մասնակցեց երեք ճակատամարտերում, ի թիւս որոց և Մուրգի ճակատամարտին, ուր 60000 պետական զօրքի դէմ կուում էին 13000 յեղափոխականներ, պաշտպանելու համար սահմանադրական կարգերը:

Ապստամբութիւնը ճնշւած էր, Էնգելսը վերջինն էր, որ թողեց կուի դաշտը ու անցավ Շվեյցարիա: Այնտեղ նա մնաց մի քանի ամիս: Ոստիկանական յետապնդումները անվերջ էին, նա ստիպւած եղաւ հեռանալ Լօնդօն:

Աշնանը Լօնդօնում ժողովւել էին Կօմմունիստական Միութեան բոլոր պարագլուխները: Վճուում է հաստատել նոր կազմակերպութիւն, նորից շարունակելու պրոպագանդայի գործը: Յեղափոխական ալիքը արդէն իջել էր, անհրաժեշտ էր համարւում պատրաստել նոր ապստամբութեան համար, մինչդեռ քաղաքական գործը առաջ տանելու հնարաւորութիւն չէր մնացել Գերմանիայում: Մարքսի և Էնգելսի աշխատութիւնները այլևս ոչ մի թերթ չէր վստահանում տպագրել: Մարքսը վերադարձաւ Բրիտանական թանգարանը և սկսեց իր պատմատնտեսական աշխատութիւնները, իսկ Էնգելսը ուղեորւեց Մանչեստեր քաղաքը, նորից ծառայութեան մտաւ իր հօր գործարանում: 1864 թ. նա բաժնետէր էր այդ գործարանում, իսկ 1869 թ. վերջնականապէս թողեց այդ գործը ու տեղափոխեց Լօնդօն:

Երկու ընկերները փոքր ընդմիջումներով 20 տարի բաժանւած էին իրարից, սակայն այս հանգամանքը չէր խանգարում նրանց մտքի փոխանակութեանը: Գրեթէ ամեն օր նրանք նամակներ էին փոխանակում

ու իրենց մտքերը ու կարծիքները արտայայտում տնտեսական և քաղաքական կեանքի հրատապ խնդիրներ շուրջը:

Եւրոպայում բանւորական շարժումը նորից կենդանանում է 60-ական թուականների սկզբում և տարածւում ոչ միայն Գերմանիայում, այլև Ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում: Բանւոր դասը, արթնանում է նոյն իսկ Սպանիայում և Իտալիայում: 1864 թ. Լօնդօնում հիմնւում է հռչակաւոր «Ինտերնացիօնալը» որը իրեն նպատակ է դնում կազմակերպել միջազգային պրօլետարիատը և նրա շարժմանը տալ մի գիտակցական ամբողջութիւն: Էնգելսը նրա եռանդուն անդամն էր: Նա իր գործարանը թողնելուց յետոյ ամբողջովին այդ կազմակերպութեանն էր նւիրւել (1870 թ.):

«Ինտերնացիօնալի» խափանումից յետոյ վերջանում է նաև Մարքս—Էնգելսի անմիջական կուսակցական գործնական գործունէութիւնը: Այնուհետև նա շարունակ գրագրութիւն էր պահպանում զանազան երկրների սօցիալիստական պարագլուխների հետ: Նամանաւանդ մեծ էր նրա ազդեցութիւնը Գերմանական Սօց.-Դեմ. վրայ: Էնգելսի բազմաթիւ յօդուածները փուլով են ֆրանսիական, գերմանական, անգլիական և ամերիկական պարբերական օրգաններում:

Տեղը չէ այստեղ մի առ մի թւել նրա գործերը և զրական աշխատութիւնները, և հնարաւորութիւն էլ չկայ: Նա զբաղւել է միաժամանակ մարդկային հասարակութիւնը շարժող նիւթական ոյժերի ուսումնասիրութեամբ և ամենաբարդ փիլիսոփայական հարցերի լուսաբանութեամբ: Նա գրել է քաղաքական բրօշուրներ, միաժամանակ և ուսումնասիրել է մաթեմատիկա, հնէ, քիմիա և զինւորական պատմութիւն: Եւ այն ամենը, ինչ նա արել է, խօսել է, կարդացել է,

խորհել է, նւիրւած է եղել տանջւող և մաքառող մարդ-
կութեանը: Պատմական օրերում, որպէս յեղափոխական,
զէնքը ձեռքին մաքառել է հալածւածների և տանջ-
ւածների ազատութեան համար, և մինչև կեանքի վեր-
ջին օրը նրա մտքերը բանւորութեան հետ էին: Նա
իր ամբողջ կեանքը նւիրել է սօցիալիզմին, ահա թէ
ինչու նրա կենսադրութիւնը վերջին յիսուն տա-
րւայսօցիալիզմի պատմութիւնն է:

Էնգէլսը վախճանուեց Լոնդոնում 1895 թ. օգոս-
տոսի 5-ին:

Համաշխարհային պրօլետարիատը դեռ ևս այնպէս
ուժգին կերպով չէր ցնցւել:

ԹԻԵՐԸ ԻՐԵՆՔ ԵՆ ԽՕՍՈՄ!

Ռուսական կայսերական տան եկամուտները.

—

Թագաւորական տոհմը ապրում է երեք աղբիւր-
ներից ստացւած միջոցներով: Նախ և առաջ Կայսե-
րական տան մինստրութեանն ամեն տարի զանձարա-
նից բաց է թողնւում որոշ գումար: Այդ «նպաստը պե-
տական» գանձարանից» 1904 թ. հաւասար էր 12,845,477
ր., իսկ 1906 թ. նախահաշւի մէջ մտցրւած է 16,359,595
ր.: Երկրորդ աղբիւրը հանդիսանում են Ուղէլի գոյքե-
րը և կայսերական տան կապիտալները, կազմւած
կայսեր Պաւել I կողմից 1797 թ. «ապահովացնելու
ընդմիջտ կայսերական տոհմի դրութիւնը»: Այդ գոյ-
քերը անբաժան պատկանում են ողջ Թագաւորական
տոհմին: Հարիւր տարւայ ընթացքում (1797 թ. մինչև
1897 թ.) ուղէլի հողերի քանակը նշանաւոր չափով ա-
ճել է և այժմ Ուղէլի ձեռքում հաշւում է 7,900,000 դես-
ետին, որից 5,720 000 դես. անտառ: Այդ հողերի վրայ
տարւում է լայնածաւալ անտեսութիւն, շինւած
են շատ գործարաններ, ֆաբրիկներ և առևտրա-արդիւ-
նագործական ձեռնարկութիւններ: Այսպէս՝ 1896 թ.
ուղէլի կալածներից հաշւել է 15 հազար զանազան
հասոյթաբեր աղբիւրներ. 1,500 ջրաղաց, 1000 ձկնի
վաթագաներ, 10,000 տնատեղեր և կապալով տրւած
հողաբաժիններ (чиншевые участки), 850 առևտրա-
կան հիմնարկութիւններ, 100 նաւամատոյցներ, 100
գործարան և ֆաբրիկ, 100 հանքատեղեր և այլն: Ու-
ղէլին իմիջի այլոց պատկանում են այնպիսի յայտնի

գործարաններ, ինչպէս Վոլոգդայի նահանգի, Վելսկի շրջանի սղոցարանը (лѣсопильный зав.), որը մշակում է տարին մինչև 200,000 գերաններ և բեւօվէժակայա վայրենի եղներով յայտնի անտառի գործարանը (տարին մշակում է մինչև 2 միլիոն խորանարդ փուտ փայտ), Պետերբուրգի կայսերական թանգազին քարեր թրաշող ֆաբրիկը, որը գործում է միայն Բարձրագոյն դրան համար, Սամարայի նահանգի Տիմաշևսկի շաքարի գործարանը: Վերջին գործարանում տարին պատրաստում է մինչև 80,000 պուդ շաքարաւաղ, որը ստացւում սեփական դաշտերի ճակնդեղից (свекла): Այդ գործարանի կալածքում շինած է 1,500 դես. համար արհեստական ոռոգում: Գետի ջուրը ջրմուղների միջոցով բարձրանում է մինչև 10 սաժէն և առուների ցանցերով բաժանւում դաշտերին: Յետոյ, Ուդէլը ունի Ռուսաստանում ամենամեծ այգիները և զբաղւում է դինու խոշոր առևտրով (1896 թ.ին ծախել է մէկ ու կէս միլիոն ըուրլու գինի): Սակայն Ուդէլը ամենակարևոր եկամուտները ստանում է ոչ թէ սեփական տնտեսութիւնից, այլ հողերի կապալից. այսպէս 1896 թ. կապալով տրւել է 2 միլիոն դեսեատինից աւել: Բոլոր յիշած ձեռնարկութիւնները 1896 թ. տւել են մօտ 20 միլիոն ըուրլու մաքուր արդիւնք: Հարիւր տարւայ ընթացքում (1797—1897 թ.) Ուդէլը տւել է կայսերական ընտանիքին 236 միլ. ըուրլի: Բացի Ուդէլի հողերից թագաւորական Տունը ունի նաև առանձին զբաղական կապիտալ: Դրան իմիջի այլոց միացրել է և այն 48,659,000 ը., որը ստացել է Ուդէլը թագաւորական Տան պատկանող ճորտերի ազատումից (երկու սեռի միջև երեք ու կէս միլիոն հոգի): Ահա այս երկու աղբիւրներից (նպաստ զանձարանից և հասոյթներ Ուդէլի գոյքե-

րից) են տրւում կայսերական Տոմի անդամներին նըրանց ծախսերը և արտակարգ ընծաները: Իմիջի այլոց պետական զանձարանի զումարներից անւում են հետևեալ ծախսերը (տես «Կայսերական Տոմի հիմնարկութիւն» օրէնքի ժողովածուի I հ. I մաս). թագաւորը թագուհուն նրա տան ծախսերից բացի տրւում է տարին 200,000 ըուրլի: Այդքան էլ ստանում է այլի թագուհին: «Թագաւորի զաւակները մինչև չափահաս դառնալը» ստանում են իւրաքանչիւրը տարին 33,000 ը., իսկ թագաժառանգը, բացի իր տան ծախսերից, 100,000 ը. տարեկան: Կայսեր դուստրների և թուռների ամուսնանալու դէպքում նրանց տրւում է «բաժինը» իւրաքանչիւրին մէկ միլիոն ըուրլի: Կայսերական Տոմի այլ անդամների ծախսերը տրւում են Ուդէլի կալածքների եկամուտներից, օրինակ, այսպիսի չափերով. կայսեր իւրաքանչիւր չափահաս որդուն (բացի թագաժառանգից) տարեկան 150,000 ը., միաժամանակ տան կարգ ու սարքի համար մէկ միլիոն ըուրլի, իսկ ամուսնանալուց՝ տարեկան 200,000 ը. և պալատական ծախսերի համար 35,000 ը.: Կայսեր որդիների կանանց իւրաքանչիւրին տրւում է տարեկան 100,000 ը., իսկ ամուսնական նւէրներ միանգամից՝ 40,000 ը., իսկ ամուսնական նւէրներ միանգամից՝ 100,000 ը. թագաւոր կայսեր անունից և 50,000 ը. ամուսին մեծ իշխանից: Կայսեր դստեր չափահաս դառնալուց մինչև ամուսնութիւն տարեկան ստանում են 50,000 ը. իւրաքանչիւրը:

Վերջապէս կայսերական Տոմի եկամուտների երրորդ աղբիւրն է նրա անդամների անձնական գոյքերը: Այստեղ, օրինակ, մտնում են այսպէս կոչող կարիքատի հողերը, այսինքն թագաւոր կայսեր անձնական սեփականութիւնը: Այդ հողերը Սիբիրում հաշւում են մինչև 42,500,000 դեսեատին (ի թիւս որոնց Ալտայի և

ներչինսկի ոսկերեր շրջանները): Եւրոպական Ռուսաստանում նրանց թւին է պատկանում «Լիվադիա» կալուածքը և այլն: Այդ տեսակ անձնական կալուածքներ ունեն նաև Մեծ Իշխանները (այսպէս, Մեծ-Իշխ. Միխայիլ Նիկոլայեվիչը Կովկասում ունի Բօրժօմ կալուածքը և այլն): Կայսերական Տոհմի կալուածքների այս համառօտ հաշւից երևում է, որ Ռուսական Կայսերական Տունը Ռուսաստանում անկասկած հանդիսանում է ամենախոշոր և ամենահարուստ սեփականատէրը:

«Народ. Камендарь», 1907 г.

ՊՐՈԼԵՏԱՐԵՐ

ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԷՔ!

Կարլ Մարքսը այն հանձարեղ գիտնականն էր, որ առաջին անգամ հիմնաւորեց այն ճշմարտութիւնը թէ գիտակցութիւնը չէ որով պայմանաւորւում է մադրկային հասարակութեան կենցաղը, այլ կենցաղն է, որ պայմանաւորում է գիտակցութիւնը: Ըստ Կ. Մարքսի բացարձակ և անպայման ճշմարտութիւններ, յաւիտենական հասկացողութիւններ գոյութիւն չունեն և ամեն ինչ մարդկային հասարակութեան մէջ փոփոխւում է այդ հասարակութեան տնտեսական աստառի հետ: «Ամեն ժամանակի իր հոգսը, ամեն սերունդի իր խնդիրը վճռելու համար», ասում է Հենրիկ Իբսէն: Եւ դա միանգամայն ճիշտ է: Ամեն ինչ հոսում է մեր շուրջը, ամեն ինչ փոփոխւում է և կեանքի ալիքը երկար և այլազան ճանապարհ կտրելուց յետոյ այսօր մեզ տարուրերում է կապիտալիզմի յորձանքներում ու ցոյց է տալիս սօցիալիզմի նաւահանգիստը: Երեկ այսպէս չէր, երեկ մենք կապիտալիզմ չէինք ճանաչում: Մի նահապետական նիստ ու կացի ժողովուրդ էինք մենք, կտրւած միմիանցից, անծանօթ միմիանց, ամփոփւած մեր հայրենի գաւառներում, հին պապեկան չութ ու գութանով, վար ու ցանքով, նահապետական հասկացողութիւններով ու տրամաբանութեամբ: Սակայն կեանքը կանգ չէ առնում և այսօր, կրկնում ենք, մենք շփոթւել ենք նոր երևոյթների, հասկացողութիւնների և զգացմունքների առջև: Կեանք-

քի անողոք խարազանը այսօր հրամայաբար մեզնից պահանջում է յարմարելու իր ստեղծած պայմաններին, նոր գնահատութեան ենթարկելու հին արժէքները և ըստ այնմ իջնելու ասպարէզ: Մենք անկարող ենք, և միամիտ կը լինէինք եթէ գորէինք, շուռ տալու կեանքի անիւր: Եւ լսւ է, շատ լսւ է, որ դա այսպէս է: Չէ՞ միայն յարաճուն յառաջխաղացութիւնից է կախած մարդկային հասարակութեան ազատագրութիւնը, չէ՞ որ ոսկէ դարը մեր յետ և չէ, այլ մեր առջև, չէ՞ որ մեզ ձգում է դէպ իրեն, հմայում ու թողնում է հաւասարութեան ու եղբայրութեան գաղափարը, սօցիալիզմը:

Այո, լիաբուն ու կենսութախ կեանքը առջններն է և մեր ներկան, կապիտալիստական ողջ կառուցւածքը, ստեղծում է այդ կեանքի նախապայմանները: Չկայ չարիք, առանց բարիքի: Սակայն ի՞նչ է կապիտալիզմը:

Կապիտալիզմը հասարակական անտեսութեան մի անցողակի շրջան է, ուր կապիտալը գերշխում է աշխատանքի վրայ, երբ գոյութիւն ունի վարձու աշխատանքը և աշխատաւորը բանում է ոչ թէ իր, այլ տիրոջ գործիքներով և միջոցներով, երբ աշխատանքը ընդունել է միանգամայն հասարակական բնաւորութիւն, իսկ աշխատանքի արդիւնքների իւրացումը պահպանում է հին ձևը, անհատականը: Ո՞րոնք են, կապիտալիստական հասարակութեան մէջ հասարակական հարցերին գոյն աւող և անողորմ բաղխող դասակարգերը:

Բուրժուազիա և պրօլետարիատ:

Առաջինը արդիւնագործկաան միջոցների տէրն է, հրամայողը, իւրացնողը, շահագործողը, ճնշողը: Երկրորդը—բանւորական ոյժի կրողը, հարստութիւն ըստեղծողը, կեանքը բեղմնաւորողը, բայց գուրկ հնարա-

ւորութիւնից վայելելու կեանքի ճոխ սեղանից, դուրկ մարդավայել ապրուստից ու հանգստութիւնից: Դրանք՝ այդ երկու դասակարգերը, անհաշտ անտիպօզիւս են, միմիանց բացասող և հակամարտ: Այդ երկու դասակարգերի թէ ամբողջ բարոյական աշխարհը, թէ սօրեայ ամեն-մի քայլն ու գործունէութիւնը չունեն միմիանց հետ համաձայնութեան և ոչ-մի կէտ: Ինչ սպիտակ է բուրժուազիայի համար, դա սև է, և սև պիտի լինի, պրօլետարիատի համար: Հաշտութեան և ոչ մի պայման, դասակարգային անողոք կոիւ—ահա այսպէս է թելադրում պրօլետարեատին նրա ապագան, կոխ, մինչև այս կարգերի ողջ տապալումը, կոխ՝ մինչև սօցիալիզմի իրագործումը:

Փանօք այդ կուին!

Եւ Մարքս ու Էնգէլս, պրօլետարիատի հոյակապ ուսուցիչները, խորը գիտակցութեամբ և իրերի խորը ըմբռնողութեամբ է որ 1847 թ. վերջացրին իրենց մանիֆեստը ուղղւած պրօլետարիատին, յետևեալ բազմախորհուրդ կոչով՝

Պրօլետարնե՛ր բոլոր երկրների՝ միացէք!

Այո, միացէք, որովհետև ձեր շահերը, ձեր ապագան այդ են թելադրում, միացէք, դուք ոչինչ չունեք կորցնելու այս աշխարհում, բացի ձեր շղթաներից, բայց ձեռք էք բերում ողջ աշխարհը, երկրային դաւախտը և երջանկութիւնը:

Բուրժուազիան իր շահերի տեսակէտից ստեղծել է ազգային պետութիւնը, իր ներքին շուկան, բայց նա չէ կարողանում կառավարել արտադրողական ոյժերը և ապրանքների յարաճուն շատանալուն, առաջագրում է արտաքին շուկայի պահանջը: Բուրժուազիան իր շահերի տեսակէտից և՛ ազգային է և՛ միջազգային: Բայց նա եթէ միջազգայնութեան տեսակէտից մի

դայլ է դառան մորթով, այդպէս չէ պրօլետարիատը: Միջազգային հաշտութեան ձիթենին և միջազգային եզրայրութիւնն աւետարտը—դա պրօլետարիատի բացօթն յատկութիւններն են: Նա միջազգային է առանց յետին մտքերի և ահա ինչու սօցիալիստական զաղափարներով տողորւած պրօլետարիատը միշտ աշխատել է և աշխատում է պահպանել իր միջազգային կազմակերպութիւնն ու համերաշխութիւնը:

1864 թ. սեպտեմբերի 28-ին Լօնդոնում (Անգլիայի մայրաքաղաքում) հիմնում է Կ. Մարքսի աջակցութեամբ «Բանւորների Միջազգային Ընկերակցութիւնը»—Ինտերնացիօնալը:

Ի՞նչ էր այդ բանւորական կազմակերպութեան կանոնադրութիւնը:

«Բանւոր դասակարգի ազատագրութիւնը պիտի լինի իրենց բանւորների գործը: Բանւոր դասակարգի ազատագրութեան համար վարած կռիւը նպատակ ունի ոչ թէ ստեղծելու նոր դասակարգային արածուցութիւններ, այլ ոչնչացնելու ամեն մի դասակարգային գերիշխանութիւն: Բանւորի տնտեսական կենթարկումը արդիւնազորութեան միջոցների սեփականատէրին, միջոցների, որը կազմում է կեանքի աղբիւրները, հանդիսանում է հիմնական պաճառը ամեն-մի ստրկութեան իր բոլոր ձևերով—քաղաքական, բարոյական և հասարակական: Ուստի և բանւոր դասակարգի տնտեսական ազատագրութիւնը հանդիսանում է բարձր նըպատակ, որին ամեն մի քաղաքական շարժում պիտի ծառայէ, որպէս միջոց: Բոլոր մինչև այժմ այդ նպատակին ուղղւած փորձերը եղել են անպտուղ, շնորհիւ համերաշխութեան բացակայութեան ամեն մի երկրի առանձին աշխատանքի ճիւղերի և բոլոր երկրների բանւոր դասակարգի մէջ: Բանւոր դասակարգի ազատա-

զրութիւնը ոչ թէ տեղական, ազգային խնդիր է, այլ հասարակական, որը բոլոր երկրների համար է, ուր գոյութիւն ունի ժամանակակից հասարակութիւնը: Այդ խնդիրը կարելի է վճռել միայն բոլոր առաջադէմ երկրների ընդհանուր ծրագրւած գործունէութեամբ» *):

Այդ սկզբունքներով է աշխատանքի եղում Ինտերնացիօնալը—Միջազգային Բանւորական Ընկերակցութիւնը—և այդ սկզբունքները տարիներից ի վեր արծարծում էր Կ. Մարքսը, որ այնուհետև դարձաւ Ինտերնացիօնալի շինարար ոգին: Սակայն մինչ է Ինտերնացիօնալի գրական աշխատանքը: Մօտ տասը տարի նա վաշել էր միջազգային բուրժուազիայի և նրա շահերի պաշտպան պետութիւնների քունը, նա ցանցել էր իր կազմակերպութիւններով Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Շվեյցարիան, Բելգիան, Իտալիան, Սպանիան, Պորտուգալիան, Հոլանդիան, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները և այլն, նա իր հաղիսաւոր խորհրդածողութիւններով ու կօնգրէսներով (Լօնդոն—1865 թ., Ժնև—1866 թ., Լօզան—1867 թ., Բրյուսսել—1868 թ., Բադել—1869 թ., Լօնդոն—1871 թ. և Հաագա—1872 թ.), օգտկում էր սօցիալիստական մտածողներին, պարզում էր բանւորական շարժման և սօցիալիզմին վերաբերեալ առեղծուածները, մշակում էր ընդհանուր սկզբունքներ և իր մտաւոր կնիքն էր դնում համաշխարհային պրօլետարիատի դատի վրայ: Այդ կօնգրէսների բուռն վիճարանութիւններից է, որ յետ էր մղւում ուսուպիան հասարակական հարցերից և մարքսիզմի յղկւած և իրականութեանը թարգման հանդիսացող աշխարհայեցողութիւնը յայտարարում էր սօցիալիզմը—գիտութիւն: Բայց Ինտերնացիօնալը միայն չէր գրաւում տեսական հարցերով: Նրա Գլխաւոր

Խոհուրդը Լօնդօնից միշտ ղեկավարում էր թէ Անգլիայի և թէ Կօնստնուստի բանւորական գործադուլները, արգելք հանդիսանալով մի այլ երկրից գործաթող վայրերը բանւորներ ներմուծելուն: Նա, վերջապէս, գործաթողներին հասցնում էր լայն դրամական օգնութիւններ, հաւաքած աշխատող ընկերներից: Ինտերնացիօնալը, բանւորութեան մարտական կազմակերպութիւնն էր և զարմանալի էլ չէ, որ բանւորութեան գիտակից թէ անդիտակից թշնամիները ոչինչ չէին խնայում հարւածելու նրան և նա տասը տարւայ ետուն աշխատանքից յետոյ վերջ է տալիս իր գոյութեանը...Ո՛չ, նա առժամանակ ընկղմւում է նիրհի մէջ, որպէսզի ապագայում հանդէս գայ նոր ռազմական ոյժերով և նոր թափով: Ինտերնացիօնալը չէր կարող մահանալ, նա շատ խորն էր ակօսել բանւորական անդաստանը, ներառելով ղեկավարների կենսարար աւանդը միայն սպասում էր առիթի, որ նորից շաղկապէ համայն աշխարհի այժմ չափահաս և կուռ բանւորական կազմակերպութիւնները: Եւ 1889 թ. Փարիզում Ինտերնացիօնալը նորից յարութիւն է առնում: Հին Ինտերնացիօնալը պարունակում էր իր մէջ կենտրօնախոյս, այլապէս մտածող տարրեր, որոնք և գլխաւորապէս ջլատեցին նրա ոյժերը: 1872 թ.—1889 թ. ժամանակամիջոցը ապարդիւն չէր անցել: Նոր Ինտերնացիօնալը այժմ էլ չէր տարուբերւում իր սկզբունքների մէջ. մարքսիզմը համատարած և ընդունւած վարպետութիւն էր: 1889 թ.ից յետոյ պարբերաբար (Բրիւսսելում—1891 թ.ին Ցիւրիխում—1893 թ., Լօնդօնում—1896 թ., Փարիզում—1900 թ., Ամստերդամում—1904 թ.), տեղի են ունենում նոր Ինտերնացիօնալի կօնգրէսները: Այս տարի էլ, օգոստոսին, կը գումարուի Շտուտգարտի կօնգրէսը: Համաշխարհային պրօլետարիատի միտքն ու

քաղաքական կեանքը ալեկոծող հարցերը իրենց լուծման ուղիներն են գտնում այդ կօնգրէսներում: Բաւական է յիշել, որ կօնգրէսների օրակարգում եղել են այնպիսի հարցեր, ինչպէս միջազգային բանւորական օրէնադրութիւն, միլիտարիզմ, կանանց հարց, ագրարային հարց, ընդհանուր ձայնատուութիւն, ընդհանուր գործադուլ, հրէական հարց, կօլօնիական քաղաքականութիւն, տրեստներ, գործադրկութիւն և այլն, որպէսզի հասկանալի լինի թէ ինչպիսի խնդիրներ են զրադեցնում աշխատանքի բանակի միջազգային շտաբին: Գիտակից պրօլետարիատը լաւ է ըմբռնում, որ այսօր երկրագնդի բոլոր ժողովուրդները շաղկապած են իրար հետ հազար ու մի տեսակ տնտեսական և բարոյական շահերով, որ սօցիալական յեղափոխութիւնը այսօր չի կարող համարւել և չէ կարող լինել մի որևէ երկրի ինքնամիտփ յեղափոխութիւն, որ նա, եթէ բռնկւի, պիտի իր ալիքներով ծառայէ ողջ համաշխարհային պրօլետարիատը և միանգամից ընդմիշտ կործանէ բուրժուազիայի գերիշխանութիւնը: Եթէ սա այսպէս է, ապա գիտակից պրօլետարիատի կազմակերպութիւնները պարտաւոր են օր առաջ ձեռք մեկնելու իրար, օր առաջ հարթելու գալիք փառաւոր օրերի ուղին, չեզօքացնելու վնասակար տենդենցները, չափաւորելու ինտրիզան բուրժուազիայի ախորժակը և յօդացնդեցնելու նրա ռազմատենչ դաւադրութիւնները: Բանւորների միջազգային կազմակերպութիւնը բղիւղում է հէնց բանւորների շահերից: Միջազգային սօցիալիստական կօնգրէսները ուղեցոյց աստղեր են, լուսաւորող և կազմակերպող: Նրանք գուրաւ են հանում այլ և այլ երկրների բանւորութեան միտքը գաւառական, եթէ կարելի է այսպէս արտայայտւել, հարցերի շրջանա-


կից և այն զնում լայն հօրիզոններ և հեռանկարներ ընդ-
գրկող սահմանների վրայ:

Պրօլետարներ բոլոր երկրներէ՝ միացէք!

ՆԷՕՖԻՏ

Վ Ե Ր Ձ

Հրատարակութիւն Սօց.-դեմ. Բան. Հայ Կազմակեր-
պութեան Բազուի Կովիտէի



1-
U.S.

Գինն է 15 հոսկ-

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0039996

